2023թ. ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2023թ.
ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին - - -

Դիմակավորված և մահակներով զինված՝ ծեծել են տրանսգենդեր կնոջը - - - - - - - - - - - - - 33
Գողացել են տրանսգենդեր կնոջ դրամապանակը - 34
Տրանսգենդեր կնոջը ենթարկել են հոգեկան ներգործության - 35

Քրեական գործեր դատաքննության փուլում - 36

Պարտքը չմարելու համար ենթարկվել է թրաֆիքինգի - 36
Մեղադրյալները տրանսգենդեր կանայք են -38
Գումար են շորթել տրանսգենդեր կնոջից - 40
Ծեծել են տրանսգենդեր կնոջը և այրել կեղծամը - 41
Տրանսգենդեր կինը մեղադրվում է խարդախության մեջ - 43

Ռազմավարական դատավարություններ - 43

Տրանսգենդեր տղամարդ Կ.Ա.-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (սեռի փոփոխություն անձնագրում) - - - - - - - - - - - - - - - 35
Տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (ատելության խոսք, բռնության հրահրում և անձնական տվյալների հրապարակում)- - - - - 45

Ամփոփում- 51

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրավունքի կողմ»-ը համայնքային իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2016 թվականի հունվարին Հայաստանում տրանսգենդեր ակտիվիստների կողմից: Կազմակերպությունը հիմնականում աշխատում է Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնքի առողջության և իրավունքների պաշտպանության, տրանս և սեքս աշխատողների համայնքների մոբիլիզացման և տեսանելիության բարձրացման, ինչպես նաև Հայաստանում տարբեր գենդերային ինքնությունների և սեռական կողմնորոշվածությունների վերաբերյալ բացասական կարծրատիպերի և նորմերի վերացման ուղղությամբ: «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն վերջին 6 տարիների ընթացքում աշխատել է հատկապես տրանսգենդերների և սեքս աշխատող ակտիվիստների, ինչպես նաև ԼԳԲԻՔ+ համայնքի այլ անդամների մոբիլիզացնելու ուղղությամբ՝ նոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ձեռք բերելու համար, որպեսզի նրանք պաշտպանեն իրենց իրավունքները և փոխեն հայ հասարակության մեջ բացասական վերաբերմունքը տրանսգենդեր և քվիր անձանց մասին:

Կազմակերպությունը անվճար իրավաբանական և հոգեբանական ծառայություններ է տրամադրում համայնքի անդամներին, նաև ճգնաժամի ժամանակ մոբիլիզացնելով ռեսուրսները տրանսգենդեր ակտիվիստներին և շահառուներին տրամադրում է սոցիալական ծառայություններ նրանց ապահովելով բնակարանի վարձակալության գումարով, սննդով և այլ առաջին անհրաժեշտության ապրանքներով:

Կազմակերպության առաքելությունն է ստեղծել կայուն լուծումներ հանուն տրանսգենդեր և սեքս աշխատողների արժանապատիվ կյանքի՝ կանխելու մարդու իրավունքների խախտումները և հաղթահարելու դժվարությունները: Մեր արտաքին տեսլականն է՝ ներդաշնակ հասարակություն, որը նպաստում է տրանսգենդերների և սեքս աշխատողների ներգրավմանը Հայաստանի հասարակությունում: Մեր ներքին տեսլականն է՝ ունենալ կայուն և փորձառու կազմակերպություն, որը հաղթահարում է մարտահրավերները մասնագիտորեն:

Կազմակերպությունն ունի երեք ռազմավարական ուղղություն.

- Մարդու իրավունքների պաշտպանություն և իրավական բարեփոխումներ,

- Համայնքի առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովում,

- Հասարակական կարծիքի փոփոխություն և նորմերի ու կարծրատիպերի վերացում:

Վերջին 6 տարիների ընթացքում ՀԿ-ն համագործակցային հարաբերություններ է հաստատել դիվանագիտական ներկայացուցչությունների, ՄԱԿ-ի գործակալությունների, ԵԽ-ի, այլ միջկառավարական, հասարակական, միջազգային, տեղական կազմակերպությունների և ցանցերի հետ: ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը Նիդերլանդների կառավարության կողմից 2020 թվականին պարգևատրվել է «Մարդու իրավունքների կակաչ» մրցանակով՝ տրանսգենդերների իրավունքները նորարարական ձևով խթանելու համար:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բիսեքսուալ (երկսեռական)	անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ
Գեյ (նույնասեռական տղամարդ)	նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու նկատմամբ
Գենդեր	վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից. գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ
Գենդերային ինքնություն/ ինքնարտահայտում	վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելաձևը
Ինտերսեքս	մարդ, որը կենսաբանորեն ունի և՛ արական, և՛ իգական սեռերին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններ՝ ինչպես քրոմոսոմային կամ հորմոնալ, այնպես էլ սեռական օրգանների ձևով, ինչի արդյունքում չի կարողանում իրեն լիարժեքորեն նույնականացնել ո՛չ տղամարդու, ո՛չ էլ կնոջ հետ
Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնք	լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս, քվիր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից
Լեսբի (նույնասեռական կին)	նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ
Խոցելի անձ կամ խոցելի խումբ	անձ կամ խումբ, որոնք իրենց որևէ հատկանիշով կամ կարգավիճակով պայմանավորված տևական ժամանակ գտնվում են խոցելի վիճակում

Հետերոսեքսուալ (տարասեռական)	անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց նկատմամբ
Հոմոֆոբիա	վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ
Ոչ բինար	ցանկացած գենդերային ինքնություն, որը չի համապատասխանում կանացիության ու առնականության երկբևեռ համակարգին
Սեռական կողմնորոշվածություն	անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի նկատմամբ
Սեռականություն	յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունը, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ
Տրանսգենդեր (տրանսգենդեր կին, տրանսգենդեր տղամարդ)	անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային ինքնարտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն. հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար
Տրանսսեքսուալ (փոխսեռական)	անձ, որն իրեն լիովին նույնականացնում է հաստատված սեռին հակառակ գենդերային դերի հետ և մշտապես ցանկանում է ապրել նախընտրած գենդերային դերով: Այն հաճախ ուղեկցվում է սեփական առաջնային և երկրորդային սեռային հատկանիշների ուժեղ մերժմամբ և նախընտրած գենդերին բնորոշ մարմնին համապատասխանեցման ցանկությամբ: Տրանսսեքսուալ անհատը ցանկանում է կամ իրականացնում է սոցիալական փոփոխություն (gender transition) արականից իգական կամ իգականից արական, որը բազմաթիվ, բայց ոչ բոլոր դեպքերում ներառում է նաև սոմատիկ փոփոխություն՝ հակառակ սեռի հորմոնային թերապիա և սեռական օրգանների վիրահատություն
Տրանսֆոբիա	բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա

ՍԿԳԻ	սեռական կողմնորոշվածություն և գենդերային ինքնություն և/կամ գենդերային ինքնարտահայտում
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց

ՆԱԽԱԲԱՆ

2023թ-ը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ կամ Կազմակերպություն) համար հագեցած աշխատանքային տարի էր՝ իր ձեռքբերումներով, նոր համագործակցություններով, իրավական գործերի հաղթանակներով: Կազմակերպությունը ողջ տարվա ընթացքում շարունակել է իրավաբանական խորհրդատվություն, փաստաբանական ծառայություններ մատուցել, սոցիալական աջակցություն ցուցաբերել Կազմակերպությանը դիմած Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց, նրանց ընտանիքների անդամներին, համակիրներին, ակտիվիստներին:

Աշխարհում և մասնավորապես Հայաստանում առկա մարտահրավերները ստիպում են Կազմակերպությանը լինել զգոն՝ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքները պաշտպանելու գործում: Հայ-ադրբեջանական պատերազմը, արցախյան շրջափակումը, արցախահայության բռնի տեղահանումը, ռուս-ուկրաինական պատերազմո էապես խնդիրներ են ստեղծել Հայաստանում՝ կապված սոցիալական, տնտեսական, անվտանգային և, իհարկե, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, ինչն էլ էապես ազդել է Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնքի վրա: Ցավով պետք է արձանագրենք, որ 2023թ-ը թվականը փորձությունների և ծանր կորուստների տարի էր Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնքի համար:

2023թ-ի օգոստոսի 20-ին իր բնակարանում դաժանաբար սպանվեց 28 ամյա տրանսգենդեր կին Ադրիանան, հանցագործը հետքերը թաքցնելու նպատակով՝ նաև այրել էր վերջինիս բնակարանը: Մարտի 13-ի լույս 14-ի գիշերը Ամիրյան-Զաքյան փողոցների խաչմերուկում տասից ավելի դիմակավորված անձինք՝ մահակները ձեռքներին, հարձակվել են տրանսգենդեր կնոջ վրա և ծեծել՝ վերջինիս պատճառելով տարբեր մարմնական վնասվածքներ և ենթարկել հոգեբանական բռնության: Հունիսի 11-ին իր բնակարանում հարձակման է ենթարկվել տրանսգենդեր կին, ով 2 անձանց կողմից ծեծվել է, դանակի սպառնալիքով՝ իրենից հափշտակել են բջջային հեռախոսը և գումարը: 2023թ-ի ընթացքում ինքնասպանություն են գործել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ 8 անձ: Այս բոլոր դեպքերը կատարվել են ատելության շարժառիթով՝ տուժողների սեռական կողմնորոշվածության և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ պայմանավորված (տրանսգենդեր կին Ադրիանայի սպանության դեպքում քննարկվում է նաև այդ վարկածը):

Փաստ է, որ հասարակությունը շարունակում է մնալ անհանդուրժող, տրանսֆոբ, սեռական կողմնորոշվածության և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը բավականին ակտիվացավ նաև սոցիալական ցանցերում՝ TikToc, Facebook, Instagram, Youtube, մեդիայում և ինտերնետային այլ հարթակներում: Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց վերաբերյալ ցանկացած լրատվության՝ անկախ դրա բնույթից, մեկնաբանությունների դաշտերը սփռվում էին ատելության խոսքերով: Կազմակերպությունը մեկ տարի շարունակ հավաքագրել է սոցիալական հարթակներում տարբեր անձանց կողմից Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ ուղղված ատելության խոսքը, սպառնալիքները, բռնության կոչերը:

Զեկույցում ներկայացվել է Կազմակերպության 2023թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված իրավապաշտպան գործունեության արդյունքները, ռազմավարական դատական գործընթացները և հետագա ռազմավարական ուղղությունների վերաբերյալ Կազմակերպության տեսլականը:

Զեկույցում ամփոփվել են տարվա ընթացքում Կազմակերպության կողմից մատուցված իրավական խորհրդատվությունների և փաստաբանական ծառայությունների քանակական ցուցանիշները, արձանագրված իրավախախտումների փաստերը, ընթացքը և դրանց իրավական մեկնաբանությունները, Կազմակերպության իրավաբանական խմբի կողմից հաջողությամբ ավարտված գործերի նկարագրերը, ներառվել են մի քանի առանցքային գործեր, որոնք էական նշանակություն ունեն Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքների պաշտպանության գործում, ներկայացվել են պետական և այլ մարմիններին ուղղված առաջարկություններ, որոնք միտված են բարելավելու օրենսդրական դաշտը, կրթական մակարդակը, ստեղծելու գործուն մեխանիզմներ առավել պաշտպանելու Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքները, ինչպես նաև՝ ռազմավարական դատավարությունները, որոնց քննությունը ներկայումս գտնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (այսուհետ՝ ՄԻԵԴ):

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023Թ-Ի ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն 2023 թվականին շարունակել է իրավական աջակցություն տրամադրել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց, նրանց ընտանիքների անդամներին, համակիրներին, ակտիվիստներին:

Մեկ տարվա ընթացքում հավաքագրված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք շարունակում են հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվել ընտանիքում, աշխատավայրում, կրթական հաստատություններում, իրավապահ մարմիններում, զինված ուժերում, առողջապահության ոլորտում, հասարակական և այլ վայրերում: Այս անհանդուրժող վերաբերմունքը պայմանավորված է նաև սեռական կողմնորոշվածության, գենդերային ինքնության, սեռականության հարցերի վերաբերյալ հասարակության տեղեկատվության սահմանափակմամբ և գիտելիքի բացակայությամբ: Հասարակության այն հատվածը, որն ականատես է լինում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ իրականացված իրավունքների ոտնահարումներին, ճնշումներին, ծաղրին՝ անտարբերություն է ցուցաբերում:

Կազմակերպության փաստաբանները հաշվետու տարվա ընթացքում իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց, իրավական աջակցության շրջանակում որպես ներկայացուցիչներ, հանդես են եկել դատարաններում, ոստիկանությունում, քննչական և այլ պետական մարմիններում:

2023թ-ի 12 ամիսների ընթացքում իրավաբանական խորհրդատվության համար Կազմակերպությանը դիմել է 478 անձ: Իրավաբանական խորհրդատվության տրամադրումը եղել է իրավապահ մարմիններում, դատարաններում փաստաբանների անմիջական մասնակցությամբ, ինչպես նաև՝ հեռախոսով և Կազմակերպության գրասենյակում:

Խորհրդատվությունները տրամադրվել են հետևյալ հարցերով՝

- անձնագրում անվան փոփոխություն, նոր անձնագրի, նույնականացման քարտի ստացում,
- կենսաթոշակի նշանակում,
- անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների ապօրինի տարածում/տարածման սպառնալիք,
- ատելության խոսք, վիրավորանք, բուլինգ,
- պարտադիր զինվորական ծառայության հետ կապված խնդիրներ, զինվորական ծառայությունից ազատում,
- հորմոնաթերապիային վերաբերող խնդիրներ,
- ընտանեկան բռնություններ,
- ամուսնալուծություն, երեխաների խնամակալություն, ալիմենտ,
- աշխատանքային հարաբերություններ, աշխատանքից ապօրինի ազատում,

- սպասարկման ոլորտի հետ կապված խնդիրներ,
- խարդախություն, շորթում, սպառնալիքներ,
- սպանություն, մարմնական վնասվածքներ, ավազակային հարձակում,
- քրեական գործով՝ տուժողի, մեղադրյալի իրավունքներին վերաբերող հարցեր,
- իրավական այլ հարցեր:

Կազմակերպությանը հեռախոսազանգերով իրավաբանական օգնություն է տրամադրել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ 293 անձի:

Հեռախոսանգերից պետք է առանձնացնենք վիճակագրական հետևյալ թվերը.

- Զանգերից 37-ը վերաբերվել են ոստիկանությունում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց կողմից բախված խնդիրներին.
- 51-ը՝ պետական այլ մարմինների հարցերին (ՀՀ ԱՆ ՔԿԱԳ ծառայություն, զինվորական ծառայություն, նախարարություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ).
- 28-ը՝ սպասարկման ոլորտում բախվող խնդիրներին, երբ տրանսգենդեր անձինք առընչվել են որևէ խտրականության ծառայություն ստանալու հետ կապված (սուպերմարկետներ, սրճարաններ, սպորտային ակումբներ, դեղատներ և այլն).
- 55-ը՝ ընկերների հետ, ընտանիքում կամ կենցաղում տրանսգենդեր անձանց խնդիրներին, ընտանեկան հարաբերություններին.
- 38-ը՝ ատելության խոսքին (վիրավորանք, բուլինգ, խտրականություն).
- 84-ը՝ այլ իրավական հարցերին:

2023 թվականին ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության դեպքերով Կազմակերպության է դիմել 57 Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձ:

Հայաստանում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների դեպքերը կարելի է դասակարգել և՛ որպես քրեորեն պատժելի արարքներ, և՛ որպես գործողություններ, որոնք քրեորեն պատժելի չեն: Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային, ազգային, միջազգային կոնվենցիոն և իրավապաշտպան մարմինները մշտապես կարևորել են ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարը, քանի որ ատելության հիմքով հանցագործությունը ոչ թե իրավախախտում է ուղղված տուժողի անձի, այլև՝ համայնքի դեմ, և բացի մարդու հիմնարար իրավունքների խախտումներից, ենթադրում է նաև պետության անվտանգությանն ուղղված լուրջ մարտահրավեր:

Ասվածը վկայում են նաև Կազմակերպության կողմից մեկ տարվա ընթացքում սոցիալական ցանցերում՝ TikTok, Facebook, Instagram, Youtube, մեդիայում և ինտերնետային այլ հարթակներում հավաքագրված Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց հանդեպ ատելության կոչերը և սպառնալիքները:

Այսպես, 2023 թվականի հունիսի 13-ին «@maxutka_arm» անունով օգտատերը TikTok հարթակում տեղադրել էր հրապարակում՝ նշելով, որ Երևանում ձևավորվում է նոր խմբավորում, որը քաղաքը «մաքրելու է» ԼԳԲՏԻՔ անձանցից: Հոլովակը մեկ շաբաթվա ընթացքում ավելի քան 37800 դիտում և 200-ից ավել նախաձեռնությունը ողջունող մեկնաբանություն էր հավաքել, մի քանի տասնյակ մարդիկ պատրաստակամություն են հայտնել միանալ խմբին՝ տրամադրելով իրենց հեռախոսահամարները կամ տելեգրամյան հաշիվը, իսկ շատերը գրել են, որ նամակով են տեղեկացրել իրենց տվյալների մասին: Մեկնաբանությունների ճնշող մեծամասնությունը ողջունել է նախաձեռնությունը, բազմաթիվ մարդիկ սպանության և բռնության կոչեր են արել, մի քանի տասնյակ մարդիկ պատրաստակամություն են հայտնել միանալ խմբին: Մեկ այլ օգտատեր՝ «@xx_armiran_xx_official» անունով, մեկնաբանություններում առաջարկել է համագործակցել իրենց հետ, քանի որ իրենք նույնպես պատրաստվում են բացել նման խումբ: Նույն օրը «@maxutka_arm» օգտատերը տեղադրել էր ևս մի հրապարակում, որտեղ տեղեկացնում էր, որ իրենք «14-15 տարեկան են, և միանալ ցանկացողները թող գրեն իրենց տվյալները՝ viber-ով խումբ ձևավորելու ու քննարկելու համար»: Այս տեսանյութի մեկնաբանություններում նույնպես բազմաթիվ անձինք տրամադրել են իրենց տվյալները և ցանկություն հայտնել միանալ խմբին:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի իրավաբանական թիմն այս հրապարակումների վերաբերյալ նյութեր էր ուղարկել ՀՀ ներքին գործերի նախարարություն, սակայն գործով վարույթ չի նախաձեռնվել՝ բռնության սպառնալիքները որակվելով «անհասցե»:

2023 թվականի օգոստոսի 21-ին, Երևանի Կոմիտասի պուրակում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից տրանսգենդեր կին Ադրիանայի հիշատակին կազմակերպած մոմավառության ժամանակ մի խումբ անձինք հարձակվել են մոմավառության մասնակիցների վրա՝ նրանց ուղղությամբ նետելով քարեր, շշեր, հավկիթներ և ավազ: Չնայած, որ ոստիկանությունը նախօրոք ծանուցվել էր հավաքի մասին՝ տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանները ոչինչ չեն ձեռնարկել դեպքի առնչությամբ: Միջադեպից հետո «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը բողոք էր ներկայացրել ոստիկանություն, սակայն այն ևս ընթացք չէր ստացել:

Այս ամենը հաշվի առնելով, զարմանալի չէ, որ հաճախ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք վստահություն չունեն և չեն դիմում իրավապահ մարմիններին՝ համակերպվելով այն հանգամանքի հետ, որ ինչպես հասարակության, այնպես էլ պետական և իրավական մարմինների աշխատակիցների շրջանում առկա է կարծրատիպային և խտրական վերաբերմունք:

2023 թվականին ոստիկանության և քննչական մարմինների կողմից իրավախախտումների վերաբերյալ դեպքերով Կազմակերպությանն է դիմել 46 Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձ:

Ոստիկանությունում, իրավապահ մարմիններում խնդիրները կապված են անձնական իրերի առգրավման, բռնության, վատ վերաբերմունքի, անձնական տվյալների հրապարակման և այլ դեպքերի հետ: Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք գրեթե չեն դիմում իրավապահ մարմիններին այն հանգամանքով պայմանավորված, որ ոստիկանության բաժանմունքներում վերջիններս ոչ պատշաճ վերաբերմունքի են արժանանում, ոստիկանները ծաղրում և խտրականացնում են և թույլ չեն տալիս իրացնելու իրենց իրավունքները: Այս տեսանկյունից պետք է նշել, որ Կազմակերպությունը նախկինում մի քանի դեպքերով դիմումներ է հասցեագրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, որոնք վերաբերում են ոստիկանությունում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքների ոտնահարմանը: Մասնավորապես, մի դեպքով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի քննիչը հրաժարվում էր վերադարձնել տրանս անձից խուզարկությամբ վերցված անձնական օգտագործման հեռախոսը, և միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված Կազմակերպության բողոքներից հետո՝ քննիչը վերադարձրեց հեռախոսը:

Այդպիսի դեպքերը ցույց են տալիս, որ դեռևս շատ աշխատանքներ կան իրականացնելու՝ հասնելու նմանատիպ իրավիճակների բացառմանը և Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքների պաշտպանությանը:

Ավելացնենք, որ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք չեն դիմում իրավապահ մարմիններին նաև այն պատճառաբանությամբ, որ չեն վստահում նրանց, այդ մարմիններն արդյունավետ չեն աշխատում, ունեն ենթադրություններ, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց գործերը կքննեն ոչ օբյեկտիվ, ունեն մտավախություն, որ իրենց մասին տվյալները կարող են հրապարակվել վերջիններիս կողմից, կբացահայտվի իրենց անձը, հնարավոր է հանցավորը վրեժխնդիր լինի, և այլ հանգամանքներով պայմանավորված: Ուստի վերջիններս հանցագործության զոհի կարգավիճակում լինելիս նախընտրում են դիմել իրենց խնդիրներով և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների կամ պատմել, կիսվել ընկերների հետ:

Սպասարկման ոլորտի խնդիրները հիմնականում վերաբերվել են Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց կողմից ծառայություն ստանալու ընթացքում (ժամանցի վայրեր, սրճարաններ և այլն) խտրականության դրսևորմանը:

Պետական մարմինների հետ հարաբերություններում՝ ՔԿԱԳ մարմիններում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության անձնագրային բաժիններում, ՀՀ ՊՆ զինվորական կոմիսարիատներում ևս Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք խտրականացվում են: Ուստի Կազմակերպությունը Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց աջակցել է փոխել անձնագրում անունը, վերջիններիս օգնել է նաև Երևանի և մարզային տարբեր զինկոմիսարիատներում առաջացած խնդիրների ժամանակ (զինվորական ծառայությունից ազատում, տարկետում):

2023 թվականից ընթացքի մեջ են **9 դատական գործեր**, որոնցից 6-ը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, 1-ը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, 1-ը՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում: Նշված քրեական գործերից 3-ով փաստաբանները ներգրավված են որպես տուժողի ներկայացուցիչներ, 3 գործով՝ որպես մեղադրյալի պաշտպան, իսկ վարչական և քաղաքացիական գործերով՝ որպես հայցվորի ներկայացուցիչ: Ավարտվել է 1 դատական գործ: Նշված դատական գործերով կազմակերպության փաստաբանները մասնակցել են հրավիրված **59** դատական նիստերի:

Կազմակերպության փաստաբանները ներկայացուցչություն են ապահովել ոստիկանության և քննչական մարմիններում, մասնակցել են հարցաքննությունների **65 քրեական գործերով,** որոնցից **11-ը** ընթացքի մեջ են: Քրեական վարույթներից 1-ով փաստաբանները հանդես են գալիս որպես մեղադրյալի ներկայացուցիչ, 10 գործով՝ որպես տուժողի լիազոր ներկայացուցիչ:

Կազմակերպության իրավաբանական բաժնի կողմից վարվող ռազմավարական դատավարության 2 գործեր շարունակվում են գտնվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: 2023թ-ի հունվարին և մարտին երկու գործերին տրվել է համար:

Բացի իրավաբանական աջակցությունից՝ Կազմակերպության փաստաբանները պարբերաբար իրականացնում են հետազոտություններ, որոնք նպատակ ունեն բացահայտելու համայնքի խոցելիությունը, խնդիրները:

2023թ-ի փետրվար ամսից մինչև սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում կազմակերպության փաստաբաններն իրականացրել են **«Ընտանեկան բռնության ԼԳԲՏԻՔ+ զոհերի իրավիճակը Հայաստանում»** հետազոտությունը (այսուհետ նաև՝ Հետազոտություն), որը նպատակ ուներ վեր հանել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց շրջանում ընտանեկան բռնության դեպքերի տարածվածությունը, դրանց արտահայտման ձևերը, տեսակները, ինչը հնարավորություն կտա գնահատել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ կիրառվող բռնության տարածվածությունն ըստ բռնության տեսակների, հաճախականությունը, կանոնավորությունը, ինչպես նաև բացահայտել բռնարարի կողմից բռնության կիրառման դրդապատճառները և շարժառիթները, բռնության ենթարկվածների ֆիզիկական և հոգեբանական հետևանքները: Հետազոտության նպատակն էր նաև տեղեկատվություն ստանալ ՀՀ-ում գործող իրավապաշտպան կազմակերպությունների կողմից Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ, իրավասու մարմիններից հավաքագրել վիճակագրական տվյալներ, վերլուծել գործող օրենսդրությունը, վեր հանել առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը և հանդես գալ ոլորտին առնչվող մարմիններին ուղղված առաջարկություններով, ինչպես նաև լուծումներ գտնել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունը նվազեցնելու համար:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 2021թ-ից մինչև 2023թ-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ իրականացված ընտանեկան բռնության դեպքերը: Հետազոտությանը մասնակցել են 16 և բարձր տարիքի Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք: Հետազոտության մեջ ընդգրկվել են **300** կատարված հարցազրույցներից Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց կողմից ներկայացված 61 դեպքեր, որոնք տեղի են ունեցել 2021 թվականի հունվարից մինչև 2023 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում:

Նկատելի է, որ վերջին տարիներին հաճախացել են Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնքի նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը: Արձանագրենք, որ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք բռնության մասին բարձրաձայնելիս կամ բողոք ներկայացնելիս հիմնականում բավարար աջակցություն և պաշտպանություն չեն ստանում իրավապահ մարմիններից, ավելին, նման դեպքերը չեն բացահայտվում և չեն հանրայնացվում: Ընտանեկան բռնության ընթացքը տարբերվում է բռնության այլ տեսակներից, քանի որ բռնարարին զոհը, հիմնականում, սիրում կամ վստահում է, բռնարարը զոհի ծնողն է, հարազատը, զուգընկերը: Այսպիսի հանգամանքները զոհի մոտ առաջացնում են կախվածություն, որը խոչընդոտում է բռնության ենթարկված անձին հեռանալու ընտանիքից, կամ ֆինանսական դրությունից ելնելով՝ անձը հնարավորություն չի ունենում հեռանալու և ինքնուրույն տնտեսություն վարելու: Շատ հաճախ ծնողներն իրենք են իրենց երեխաներին դուրս հանում տանից:

Միայն 2023թ-ին ընտանեկան բռնության դեպքերով կազմակերպության է դիմել 29 Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձ:

Ինչպես պարզ դարձավ հետազոտության իրականացման ընթացքում, Հայաստանում չկա ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական համապարփակ և տեսակավորված տվյալների հավաքագրման կենտրոնացված մեխանիզմ, ինչը լուրջ խոչընդոտ է և բարդացնում է իրավասու մարմինների կողմից հստակ տեղեկատվության հավաքագրման գործընթացը: Ավելին, Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական տվյալներում չկա նշում անձի սեռական կողմնորոշվածության, գենդերային ինքնության և ինքնարտահայտման վերաբերյալ, ինչը, մեր ընկալմամբ, կապված է քաղաքական կամքի, ռեսուրսների, համապատասխան գիտելիքների բացակայության հետ:

Վերոգրյալից պետք է մեկ անգամ ևս արձանագրել, որ ոչ բռնության ենթարկված Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք ոչ միշտ են դիմում ոստիկանությանը, ինչը, ինչպես արդեն նշեցինք, կապված է ոստիկանության կողմից Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի, նախկինում բռնության դեպքերին չարձագանքելու, ոչ բավարար կրթության և այլ գործոնների հետ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ԾՆՈՂԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2023թ-ի մարտ ամսին Կազմակերպությանն էր դիմել Տրանսգենդեր համայնքի անդամներից մեկը և հայտնել, որ լրացել է իր մոր՝ Ա.Ե.-ի կենսաթոշակային տարիքը, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մերժել է մոր դիմումը կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ: Մասնավորապես, դիմումի մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ աշխատանքային ստաժում չի հաշվառվել 01.01.1992-25.05.1999թթ-ի ժամանակահատվածը, քանի որ, թեև աշխատանքային գրքույկում կա նշում, որ դիմումատուն 17.05.1989թ-ից մինչև 25.05.1999թ-ն աշխատել է Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկայի Սևանի մանաճյուղում, այդուհանդերձ՝ էլեկտրոնային տվյալների բազայում տեղեկատվություն չկա կազմակերպության վերաբերյալ, ուստի պետք է դիմել դատարան:

Կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, խնդրել ենք մեկ անգամ ևս հարցում կատարել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ և պարզել, թե Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկային վերաբերող արխիվային փաստաթղթերում կա՞ն Ա.Ե.-ին վերաբերելի փաստաթղթեր, քանի որ համաձայն վերջինիս աշխատանքային գրքույկի, աշխատանքի ընդունման կնիքը պատկանում է Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկային, այլ ոչ թե Սևանի մասնաճյուղին:

2023թ-ի հոկտեմբերի 4-ին ստացել ենք պատասխան, որ դիմումը բավարարվել է, Ա.Ե.-ն ընդգրկվել է հոկտեմբեր ամսվա վճարման ցուցակում:

«Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»:

ՀՀ սահմանադրություն, հոդված 83

«1. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ»:*

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն՝ *«1.Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են՝*

1) Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության, գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (պաշտոնեական պարտականությունները կատարելու), 2013 թվականի հունվարի 1-ից հետո քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու և այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաև ԽՍՀՄ տարածքում աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածները…»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն՝ *«1. Մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ:…*

6. Աշխատանքային ստաժը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան՝ աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող ստաժը, հաշվարկելու կանոնները սահմանում է Կառավարությունը:»:

Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 665-Ն որոշման հավելված 2-ի (այսուհետ՝ Որոշում) հաստատված կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնների (Կանոններ). (…)

«*…9. Աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, իսկ 1992 թվականի հունվարից սկսած՝ աշխատանքային գրքույկը և պարտադիր սոցիալական ապահովության (մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության) վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճարներ) կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը:»:*

Վերը նված հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ Ա.Ե-ի աշխատանքային ստաժի հավաստման համար միայն աշխատանքային գրքույկը բավարար չէր, անհրաժեշտ էր 1992-99թթ-ի համար ներկայացնել պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: Քանի որ ՀՀ միասնական սոցիալական ծառայության նշանակման վարչությունը էլեկտրոնային տվյալների բազայում տեղեկատվություն չէր հայտնաբերել Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկայի Սևանի մանանձյուղի վերաբերյալ, ուստի Ա.Ե.-ին ուղղորդել են դիմել դատարան:

Կազմակերպության իրավաբանները բողոքարկման դիմում ներկայացրեցին նախարարությանը և խնդրեցին մեկ անգամ ևս հարցում կատարել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ և պարզել, թե Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկային վերաբերող արխիվային փաստաթղթերում կա՞ն Ա.Ե.-ին վերաբերելի փաստաթղթեր, քանի որ համաձայն վերջինիս աշխատանքային գրքույկի, աշխատանքի ընդունման կնիքը պատկանում է Դիլիջանի տրիկոտաժի ֆաբրիկային, այլ ոչ թե՝ Սևանի մասնաճյուղին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությունից 20.06.2023թ-ին հայտնել են, որ դիմումում բարձրացված հարցի վերաբերյալ Միասնական սոցիալական ծառայության կողմից 07.06.2023թ-ին հարցում է կատարվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, որտեղից պատասխանը ստանալուց հետո կրկին քննության կառնվի Ա.Ե.-ի աշխատանքային ստաժի հաշվարկման, կենսաթոշակի նշանակման (մերժման) հարցը:

2023թ-ի հոկտեմբերին ՀՀ միասնական սոցիալական ծառայության նշանակման վարչության տասնմեկերորդ բաժնից 11.09.2023թ-ին ստացված գրությամբ տեղեկացանք, որ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն կատարած հարցմանն ի պատասխան ստացված գրության համաձայն՝ կենսաթոշակի ստացման դիմումին ընթացք է տրվել և Ա.Ե.-ին 28.01.2023թ-ից նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ:

ԽԱԽՏՎԵԼ ԷՐ ԱՆՁԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՐԵԿԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

2022թ-ի օգոստոս ամսին Կազմակերպություն է դիմել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնքի համակիր Ա.Մ-ն և հայտնել, որ 2022թ-ի օգոստոսի 27-ին, ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները կանգնեցրել են իրեն և իր վարած տրանսպորտային միջոցը, ստուգել են սթափությունը: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով կազմվել է արձանագրություն, իրեն տրվել է ժամանակավոր վկայական՝ պատճառաբանությամբ, որ վերջինս ղեկին եղել է ոչ սթափ վիճակում:

ՀՀ ոստիկանության Պարեկային ծառայության պարեկի 12.09.2022 թվականի որոշմամբ՝ Ա.Մ.-ն ենթարկել է վարչական պատասխանատվության՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, որն առաջացրել է տրանսպորտային միջոցի վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով (մեկ տարվա ընթացքում տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում կրկին վարելը՝ վարչական տույժի նշանակման օրվանից հետո):

Ա.Մ.-ն 04.10.2022թ-ին ներկայացրել է վարչական բողոք, և 18.10.2022թ-ին, ժամը 11:30 նշանակվել է վարչական լսում, որի ծանուցումը Ա.Մ.-ին հանձնվել է փոստային առաքման միջոցով 20.10.2022թ-ին, այսինքն՝ նշանակված վարչական լսումից 2 օր անց:

Ա.Մ.-ի անունից Կազմակերպության փաստաբանները ՀՀ վարչական դատարան հայց են ներկայացվել ընդդեմ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության՝ վիճարկելով ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության որոշումը, որով Ա.Մ.-ն զրկվել է ավտոմեքենա վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով: Փաստաբանները դատարանին նաև միջնորդություն են ներկայացրել՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, այն է՝ կասեցնել պարեկային ծառայության որոշումը մինչև գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը, որը 12.12.2022թ-ի որոշմամբ բավարարվել է: Արդյունքում Ա.Մ-ի վարորդական իրավունքի վկայականը վերադարձվել է վերջինիս:

ՀՀ վարչական դատարանը 23.10.2023թ-ի վճռով բավարարել է փաստաբանների ներկայացրած հայցը և անվավեր է ճանաչել ՀՀ ոստիկանության Պարեկային ծառայության որոշումը:

«1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:
2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:
3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

ՀՀ սահմանադրություն, հոդված 50

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎ օրենսգիրք) 267-րդ հոդվածի համաձայն՝ *«Վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից. ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը. զանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:…»:*

ՎԻՎ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ *«Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝*

1) տվյալ գործի քննությունը վերաբերում է, արդյոք, իր իրավասությանը.

2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը.

3) գործի քննությանը մասնակցող անձինք ծանուցվել են, արդյոք, դրա քննության ժամանակի և տեղի մասին.

4) պահանջվել են, արդյոք, անհրաժեշտ լրացուցիչ նյութեր.

5) վարչական պատասխանատվության ենթարկվող անձի, տուժողի, օրինական ներկայացուցիչների, փաստաբանի միջնորդությունների մասին»:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ պատշաճ վարչարարության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որն իր մեջ ներառում է տվյալ անձին վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու, ինչպես նաև մինչև միջամտող անհատական ակտն ընդունելը լսված լինելու իրավունքները:

Դատարանը վերը շարադրված նորմերի վերլուծության և սույն գործի փաստերի համադրման հիման վրա արձանագրել է, որ Ա.Մ.-ն՝ որպես վարչական պատասխանատվության ենթարկվող անձ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակի և տեղի մասին չի ծանուցվել, իսկ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ, ինչի արդյունքում խախտվել են Ա.Մ.-ի՝ գործի նյութերին ծանոթանալու, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու իրավունքները, ինչի արդյունքում չի ապահովել Ա.Մ.-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված լսված լինելու իրավունքը՝ զրկելով վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը:

Ուստի դատարանը որոշել է Կազմակերպության փաստաբանների Ա.Մ.-ի անունից ներկայացված հայցն ընդդեմ Ոստիկանության պարեկային ծառայության բավարարել. անվավեր ճանաչել Ոստիկանության պարեկային ծառայության 12.09.2022 թվականի վարչական իրավախախտման գործով որոշումը:

Սույն գործով, Ոստիկանության պարեկան ծառայությունը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որն ընդունվել է վարույթ: Դատական նիստը նշանակվել է 2024 թվականի հոկտեմբերի 17-ին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ. ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ-ի մայիս ամսին Կազմակերպությանն էր դիմել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ համայնքի անչափահաս անդամներից և հայտնել, որ ծնողներն ամուսնալուծվել են և հիմա հայրն իրեն, մորը, անչափահաս քույրերին դուրս է հանում իրենց համատեղ վարձակալած տանից:

Կազմակերպության փաստաբանները տղայի մոր անունից հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ երեք անչափահաս երեխաների համար ալիմենտի և երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրը սահմանելու պահանջներով:

Դատարանը հայցադիմում է վարույթ ընդունել: Երեխաների հայրը հակընդդեմ հայց է ներկայացրել դատարան՝ երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին, միևնույն ժամանակ միջնորդել է կիրառել հայցի ապահովում, որը մասնակի բավարարվել է:

«1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին: ...»:

ՀՀ սահմանադրություն, հոդված 36, կետ 1

«2. Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով»:

ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 68, կետ 2

Սույն գործով մայրը ամուսնալուծությունից հետո՝ սկսած 2023թ-ի մայիս ամսից, իր երեք անչափահաս երեխաների հետ բնակվում է առանձին, երեխաներն իր խնամքի տակ են և չեն ցանկանում բնակվել իրենց հոր հետ: Մայրը միայնակ չի կարող ապահովել երեք երեխաների հոգսը, իսկ հայրը չի ցանկանում աջակցել իր երեխաներին:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. *«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը»:*

Նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *«Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ: Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քննության ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն է տրվում մասնակցել քննությանը և ներկայացնել իրենց տեսակետները»:*

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *«3. Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):»*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաները ծնողների ամուսնալուծությունից հետո բնակվում են մոր հետ, Կազմակերպության փաստաբաններն իրենց հայցապահանջում գրել են՝ երեխաների բնակության վայրը սահմանել մոր բնակության վայրը:

Ինչ վերաբերում է հոր կողմից տեսակցության կարգ սահմանելու մասին հակընդդեմ հայցի, ապա փաստաբանների անմիջական բանակցությունների արդյունքում՝ մայրը չի խոչընդոտում և անարգել թույլատրում է հորը տեսակցել իր երեխաների հետ:

Գործի քննությունը շարունակվում է դատարանում: Հերթական դատական նիստը նշանակվել է 2024 թվականի փետրվարին:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ ԱՐԴԱՐԱՑՆՈՂ ՀԻՄՔՈՎ

2021 թվականի մայիսի 27-ին տրանսգենդեր կնոջ՝ Մ.-ի նկատմամբ հարուցվել էր քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի հատկանիշներով, այն է՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը, որը կատարվել է երկու կամ ավելի անձանց, ինչպես նաև անչափահասին օգտագործելով, որը նախատեսում էր ազատազրկում՝ 3-ից 6 տարի ժամկետով:

«1. Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
2. Նույն արարքը, որը կատարվել է՝
...
5) երկու կամ ավելի անձանց օգտագործելով,
6) անչափահասին օգտագործելով,
...
պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա»:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 262, մաս 2, կետ 5 և 6

Մասնավորապես, ըստ մեղադրանքի, Մ.-ն 2019 թվականի դեկտեմբեր ամսին Երևան քաղաքում վարձակալել է բնակարան և համատեղ բնակվել է Ճ.Մ.-ի հետ, ով զբաղվել է սեքս աշխատանքով: Նույն ամսվա ընթացքում նախապես պայմանավորվածության համաձայն նույն բնակարան է տեղափոխվել նաև անչափահաս Ս.Կ.-ն, որից հետո, ըստ մեղադրանքի, տրանսգենդեր կին Մ.-ն թույլատրել է անչափահաս Ս.Կ.-ին զբաղվել սեքս աշխատանքով:

Նախաքննության սկզբից վարույթին ներգրավվել է կազմակերպության փաստաբանը և իրականացրել է տրանսգենդեր կնոջ շահերի պաշտպանությունը: Նախաքննության ընթացքում փաստաբանի կողմից պլանավորված գրագետ պաշտպանության շնորհիվ, այդ թվում՝ միջնորդությունների ներկայացմամբ, առերես հարցաքննություններով, պարզ դարձավ, որ ներկայացված մեղադրանքը որևէ կապ չունի իրականության հետ:

Բազմաթիվ վկաների հարցաքննության, առերես հարցաքննությունների միջոցով հերքվեց Մ.-ի կողմից իրեն վերագրվող հանցանքի կատարումը:

Նախաքննության ընթացքում համապատասխան իրավական փաստարկներով պաշտպանական կողմը հիմնավորեց Մ.-ի գործողություններում հանցավոր արարքի բացակայությունը: Մասնավորապես, թիվ ԵՇԴ/0041/01/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ. *«Սուբյեկտիվ կողմից քննարկվող հանցակազմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ անձը գիտակցում է, որ իր գործողություններով նպաստում է այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն, նախատեսում է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանում դա: Հանցագործության սուբյեկտ կարող է լինել հանցագործության կատարման պահին տասնվեց տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ:*

Խնդրո առարկա հանցակազմի օբյեկտիվ կողմի տարր է, ի թիվս այլնի, գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող նշյալ գործողությունը կարող է դրսևորվել՝

1) կավատության ձևով, այսինքն՝ վարձատրության կամ այլ գույքային օգուտի դիմաց սեռական հարաբերության համար միջնորդելով, կամ

2) նույն արարքը կատարելով, որը դրսևորվել է նաև բնակարան կամ այլ կացարան մեկ անգամ տրամադրելով, կամ

3) առանց սեռական հարաբերության համար միջնորդություն իրականացնելու, սակայն գույքային օգուտի դիմաց ոչ պարբերաբար բնակարան կամ այլ կացարան տրամադրելով, կամ

4) գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ եղանակներով նպաստելով:

Նախորդ կետում կատարված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող քննարկվող գործողության համար պարտադիր է գույքային օգուտ ստանալու և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու ընտրված եղանակի միջև փոխադարձ կապի առկայությունը: Այլ կերպ՝ գույքային օգուտը պետք է հանդիսանա պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու արդյունք: Այդ առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համապատասխան հանգամանքը հաստատված համարելու համար վարույթն իրականացնող մարմինը պետք է առնվազն պարզի՝

1) ստացված գույքային օգուտի առաջացման աղբյուրը,

2) դրա փոխկապակցվածությունը պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու ընտրված ձևի հետ,

3)-արդյոք ստացված գույքային օգուտը հանդիսանում է պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար վարձատրություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշելու համար, թե անձի արարքում առկա է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող խնդրո առարկա գործողությունը (գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը), ի թիվս այլնի, անհրաժեշտ է պարզել՝ արդյոք այդ անձը գործել է ուղղակի դիտավորությամբ (այսինքն՝ գիտակցել է, որ իր գործողություններով նպաստում է այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն և ցանկացել է դա), և արդյոք ստացված գույքային օգուտը եղել է պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու արդյունք»:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում ձեռք չբերվեց վերաբերելի, արժանահավատ, օբյեկտիվ ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը հաղթահարելով անմեղության կանխավարկածը, կարող էր հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով համոզմունք առաջացնել այն մասին, որ տրանսգենդեր Մ.-ն կատարել է իրեն մեղսագրվող արարքը:

Արդյունքում, երկարատև պայքարից հետո՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ին վարույթն իրականացնող քննիչի կողմից դատախազին միջնորդություն է ներկայացվել տրանսգենդեր կնոջ նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին այն հիմքով, որ վերջինս չի կատարել իրեն մեղսագրվող արարքը: Միջնորդությունը դատախազի կողմից բավարարվել է և քրեական հետապնդումը դադարեցվել է:

Արդյունքում, տրանսգենդեր կին Մ.-ն ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽՈՇՏԱՆԳԵԼ ԵՆ ՆՈՒՅՆԱՄԵՌԱԿԱՆ ՏՂԱՄԱՐԴՈՒՆ

2022թ.-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն էր դիմել Հ.Ա.-ն և հայտնել, որ 2021թ.-ին ՀՀ զինվորական դատախազության թիվ 1 կայազորի դատախազությունում հայտարարություն է տվել զինվորական ծառայության ընթացքում իրեն խոշտանգման մասին, որի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ և 4 անձի մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի 4-րդ կետերով (խոշտանգում): Հ.Ա.-ն դիմելով «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ին՝ խնդրել էր ստանձնել իր՝ որպես տուժողի շահերի պաշտպանությունը:

«1. Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Նույն արարքը, որը կատարվել է՝
..
4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,
...՝
պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով»:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 309.1, մաս 1, մաս 2, կետ 4

Հ.Ա-ն կազմակերպությանը հայտնել էր, որ 2020թ-ին, երբ գտնվել է Արցախի Հանրապետությունում ՊԲ x զորամասում, ծառայության ընթացքում՝ իր սեռական կողմնորոշվածության պատճառով, պարբերաբար ծեծի է ենթարկվել սպայական կազմի կողմից: Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո՝ հարուցվել է քրեական գործ, որը Արցախի Հանրապետությունից տեղափոխվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչություն:

2022թ.-ի հոկտեմբերի 05-ից՝ որպես տուժող Հ.Ա.-ի լիազոր ներկայացուցիչ է ներգրավվել «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի փաստաբանը:

ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ հանցագործությունների գործերով վարչության դատախազ Հ.Մաշաղյանը, քննության առնելով ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Հ. Սարգսյանի միջնորդությունը մեղադրյալներ Գ. Լալայանի, Գ. Բաբայանի, Մ. Ներսիսյանի, Ռ. Գաբրիելյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, 04.09.2023թ.-ին որոշում է կայացրել վերը նշված բոլոր մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Կազմակերպության փաստաբանը քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, սակայն, Դատարանը մերժել է վարույթի հարուցումը, որը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 2023թ.-ի դեկտեմբերի 6-ին, բավարարել է փաստաբանի բողոքը և բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը, գործն ուղարկելով ըստ էության քննության:

ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՈՐՊԵՍԶԻ ՍԵՔՍ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԶԲԱՂՎԻ ՈՒ ԻՐ ՊԱՐՏՔԵՐԸ ՄԱՐԻ /ԹՐԱՖԻՔԻՆԳ/

2023թ-ի հունվարին կազմակերպություն է դիմել սեքս աշխատող Ջ.Ն.-ն և հայտնել, որ իրեն փորձել են թրաֆիքինգի ենթարկել, ցանկանում է կազմակերպության փաստաբանների օգնությամբ հաղորդում ներկայացնել ոստիկանություն:

2023թ-ի հունվար ամսին Կազմակերպության փաստաբանի մասնակցությամբ՝ Ջ.Ն.-ն հաղորդում է ներկայացրել ոստիկանություն:

Նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածով (պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը): Ջ.Ն.-ն ճանաչվել է տուժող:

«1. Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը՝ պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ հանրային հաստատությունը նույն նպատակով շահագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան, շինություն, ավտոմեքենա կամ այլ կացարան տրամադրելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 298-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝ պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 299, մաս 1

Ինչպես տեղեկացանք, Ջ.Ն.-ն 2022 թվականի ծանոթացել է Ա.Ք.-ի հետ: Ա.Ք.-ից վերցրել է պարտքով գումար, գույք, ոսկյա զարդեր, որոնք գրավադրվել են, սակայն պայմանավորված ժամանակին չի կարողացել մարել պարտքը և վճարել գույքի, ոսկյա զարդեի ամբողջական գումարը: Ա.Ք.-ն առաջարկել է, որպեսզի իր վարձակալած բնակարանում Ջ.Ն.-ն զբաղվի սեքս աշխատանքով և ստացած գումարները՝ որպես պարտքի մարում տա իրեն: Ջ.Ն.-ն ստիպված համաձայնել է առաջարկին և նոյեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում զբաղվել է սեքս աշխատանքով: Հաճախորդների հետ պայմանավորվածությունը նախապես ձեռք է բերել Ա.Ք.-ն: Ստացված գումարները Ջ.Ն.-ն փոխանցել է Ա.Ք.-ին: Սակայն, տեսնելով, որ իր պարտքի գումարները չեն նվազում, Ջ.Ն.-ն ստիպված դիմել է Կազմակերպությանը, ինչպես նաև ոստիկանություն:

2023թ-ի հունվար ամսին Կազմակերպության փաստաբանի մասնակցությամբ՝ Ջ.Ն.-ն հաղորդում է ներկայացրել ոստիկանություն: Նախաձեռնվել է քրեական վարույթ և Ջ.Ն.-ն ճանաչվել է որպես տուժող, ինչից հետո հարցաքննվել է:

Ինչպես տեղեկացանք՝ Ա.Ք.-ն նույնպես ոստիկանություն հայտարարություն է ներկայացրել այն մասին, որ Ջ.Ն.-ն կատարել է խարդախություն, իբր վերջինս չի ցանկանում իրեն վերադարձնել գոյացած պարտքը, գույքը, ոսկյա զարդերը: Նախաձեռնվել է քրեական վարույթ և Ա.Ք.-ն ճանաչվել է որպես տուժող:

Կատարվել են մի շարք այլ քննչական գործողություններ, այդ թվում նաև առերես հարցաքննություն: Հարցաքննության ընթացքում Ջ.Ն.-ն հայտնեց, որ ինքը կարող է ապրանքի մի մասը հետ վերադարձնել Ա.Ք.-ին, ինչին չառարկեց վերջինս: Հարցաննության հաջորդ օրը Ջ.Ն.-ն գույքի մի մասը վերադարձրել է Ա.Ք.-ին, ինչն արձանագրվել է քննիչի կողմից:

Նախաքննությունը շարունակվում է:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՁՈՀ Է ԴԱՐՁԵԼ

2022 թվականի հունիս ամսին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լ. Մարտիրոսյանը պատահաբար պարզել է, որ անհայտ անձը Կազմակերպության կայքից ներբեռնել է Կազմակերպությանը պատկանող նկարները և Կազմակերպության լոգոտիպը և դրանք հրապարակել այլ կայքում՝ առանց Կազմակերպության թույլտվության:

Կազմակերպության նախագահը նշված դեպքով հաղորդում է ներկայացրել հանցագործության մասին:

2022 թվականի հուլիսի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով (համակարգչային տվյալներն ապօրինի որսալը կամ դրանց տիրանալը):

«1. Համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող ընդհանուր օգտագործման համար չնախատեսված տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության որսալը կամ դրան տիրանալը, որը կատարվել է այդ տվյալն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակով՝
պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 362, մաս 1

Կազմակերպությունն ունի նաև գրանցված ինտերնետային պաշտոնական կայքէջ՝ www.rightsidengo.com հասցեով: 2022թ-ին Կազմակերպության նախագահը պատահաբար հայտնաբերել է, որ ապօրինի տիրացել են Կազմակերպության կայք էջի ինֆորմացիային, լոգոտիպին, նկարներին՝ ապօրինի կերպով, ինչ-որ եղանակով մուտք գործելով կայք էջ տվյալները և ինֆորմացիան ապօրինի օգտագործել: Նշված ինֆորմացիան և կազմակերպության տվյալները հայտնաբերվել են http://imsaytik.weebly.com/ ինտերնետային կայքէջում:

2022 թվականի օգոստոսի 18-ին քրեական վարույթը փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչություն, իսկ նույն ամսի 22-ին որոշում է կայացվել Կազմակերպությանը ճանաչել որպես տուժող:

2023 թվականին Կազմակերպության փաստաբանը ներգրավվել է որպես Կազմակերպության լիազոր ներկայացուցիչ և մասնակցել քննիչի կողմից իրականացված քննչական գործողություններին:

Մասնավորապես փաստաբանի կողմից ներկայացվել են մի շարք դիմումներ անձի գտնվելու վայրի և նրան հարցաքննության կանչելու անհրաժեշտության մասին, ով կարող էր տվյալներ հայտնել տեղի ունեցած հանցագործության մասին: Քննիչի կողմից ծանուցագրեր են ուղարկվել նշված անձին, որոնք վերադարձվել են, որից հետո որոշում է կայացվել նրան բերման ենթարկելու մասին:

Նախաքննությունը շարունակվում է:

ԻՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԴԱԺԱՆԱԲԱՐ ՍՊԱՆՎԵԼ Է ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԻՆ ԱԴՐԻԱՆԱՆ

Սույն թվականի օգոստոսի 20-ին Երևանում, իր կողմից վարձակալած բնակարանում առանձնակի դաժանությամբ սպանվել է Ադրիանա անունով 28-ամյա տրանսգենդեր կին Ադրիանան: Հանցագործը հետքերը թաքցնելու նպատակով նաև այրել էր կնոջ վարձակալած բնակարանը: Սպանված տրանսգենդեր կնոջ ընկերները նույն օրը՝ ժամը 16:30-ի սահմաններում, զանգահարել էին «Իրավունքի կողմ» ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին և հայտնել սպանության մասին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի (սպանություն) և 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերի (գույքը ոչնչացնելը կամ վնասելը) հատկանիշներով:

«1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը՝
պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով»:
ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 155, մաս 1

«1. Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝
պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ
հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ
ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ
կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ
ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝
...
2) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,
...
6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 264, մաս 2, կետեր 2 և 6

Սպանության հաջորդ օրը՝ օգոստոսի 21-ին, ժամը 02:40-ին, Արմավիրի մարզի 26-ամյա կասկածյալը Բավրայի սահմանային անցակետում հայտնաբերվել, ձերբակալվել և տեղափոխվել է ՆԳՆ ոստիկանության Կենտրոնական բաժին: Նա ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին, հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ, ինչի ընթացքում խոստովանել է, որ սպանությունը կատարել է ինքը, ապա բնակարանը հրկիզել և փորձել է Բավրայի սահմանային անցակետով հատել ՀՀ պետական սահմանը: Նախաքննական մարմնի որոշմամբ 26-ամյա քաղաքացին ձերբակալվել է: Նրա մասնակցությամբ շարունակում են կատարվել վարույթային և ապացուցողական գործողություններ[3]:

[3] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=i²Y⁶fqWClwY

Սպանված տրանսգենդեր կնոջ ընտանիքի անդամների դիմումի համաձայն՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության և «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմերը ներգրավվել են սույն գործով և ապահովելու են իրավաբանական ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:

Տուժողի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են մի շարք միջնորդություններ՝ բնակարանի խուզարկության, բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների ձեռք բերման, լրացուցիչ հարցաքննությունների, որոնք բավարարվել են:

Նախաքննությունը շարունակվում է:

ԴԱՆԱԿՈՎ ՍՊԱՌՆԱՑԵԼ, ԾԵԾԵԼ ԵՆ ՏՐԱՍՆԳԵՆԴԵՐ ԿՆՈՋԸ ԵՎ ՀԱՓՇՏԱԿԵԼ ՀԵՌԱԽՈՍԸ

2023թ. հունիսի 12-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ էր դիմել սեքս աշխատող, տրանսգենդեր կին Դ.-ն և հայտնել, որ մեկ օր առաջ իր բնակարանում Սևակ անունով անձի և նրա ընկերոջ կողմից ենթարկվել էր հարձակման, ծեծի և դանակի սպառնալիքով իրենից հափշտակել էին բջջային հեռախոսը և 35 000 ՀՀ դրամի չափով գումար: Դ.-ն հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, նույն օրը տրանսգենդեր անձ Դ.-ն վարույթ իրականացնող մարմնի կողմից ճանաչվել էր տուժող:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմը ներգրավվել է սույն գործի շրջանակներում և ապահովելու է իրավական ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերի (ավազակություն) հատկանիշներով:

Ավազակություն է համարվում բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունը:

2. Ավազակությունը, որը կատարվել է՝

...

5) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

...

7) խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 252, մաս 2, կետ 5 և 7

Ինչպես պարզվեց գործի նյութերից, 2023 թվականի հունիսի 11-ին՝ երեկոյան ժամը 23:00-ից 24:00-ն ընկած ժամանակահատվածում, սեքս աշխատանքով զբաղվող տրանսգենդեր կնոջ բնակարանում է լինում Սևակ անունով հաճախորդը: Սևակը պատճառաբանում է, որ վատ է զգում ու խնդրում է, որ Դ.-ն թույլ տա՝ ներքևում իրեն սպասող ընկերը բարձրանա վերև և օգնի իրեն ու տուն ուղեկցի: Երբ ընկերը բարձրանում է վերև, երկուսով հարձակվում են տրանսգենդեր կնոջ վրա, գցում են գետնին և հարվածում նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, կապտուկներ, հոգեբանական և ֆիզիկական ցավ: Այնուհետև դանակի կիրառման սպառնալիքով՝ վերցնում վճարած գումարը և բջջային հեռախոսը: Դ.-ն անմիջապես դիմում է ոստիկանություն:

Տրանսգենդեր կինը ստացել է Արագ Արձագանքման Կանանց ֆոնդի աջակցությամբ՝ «Իրավունքի կողմ» ՀԿ-ի կողմից տրամադրվող բռնության ենթարկված տրանսգենդեր անձանց համար արագ արձագանքման ֆինանսական օգնություն, որպեսզի կարողանա արագ վերականգնվել իր նկատմամբ բռնությունից և թեթևացնել այն մարտահրավերները, որոնց բախվում է այս դժվարին փուլում:

2023թ. օգոստոսի 29-ին, փաստաբանի մասնակցությամբ տրանսգենդեր անձ Դ.-ն առերես հարցաքննվել է Սևակ անունով անձի հետ, ով հենց հարցաքննության ընթացքում հարձակվել է տրանսգենդեր կնոջ վրա, ինչպես նաև հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ: Ոստիկանության աշխատակիցների կողմից նշված անձի նկատմամբ ձեռնաշղթաներ կիրառելուց հետո՝ հարցաքննությունը շարունակվել է և տրանսգենդեր անձ Դ.-ն պնդել է հանցագործությունը նշված անձի կողմից կատարված լինելու հանգամանքը: Սևակ անունով անձը կալանավորվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ՝ ԽՈՒԶԱՐԿԵԼ ԵՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ԲՆԱԿԱՐԱՆԸ

2023թ-ի հուլիսի 27-ին՝ առավոտյան ժամը 9:30-ին, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն էր զանգահարել տրանսգենդեր կին Դ.-ն և հայտնել, որ այդ պահին իր բնակարանում ոստիկանությունն իրականացնում է խուզարկություն: Դ.-ն նաև նշել էր, որ քննիչի խոսքով՝ իրեն պատրաստվում են ձերբակալել: Ինչպես հետագայում պարզ դարձավ, բնակարանում խուզարկությունն իրականացվում էր թմրանյութ հայտնաբերելու նպատակով, սակայն ոչինչ չհայտնաբերելուց հետո, տրանսգենդեր կնոջից առգրավել են նրա անձնական օգտագործման երեք հեռախոսները, համակարգիչը, ինչպես նաև բնակարանում առկա ողջ գումարը՝ 27 000 դոլար, որը տրանսգենդեր կինը հավաքել էր տարիներ շարունակ սեքս աշխատանքով զբաղվելու միջոցով:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի փաստաբանները զանգից անմիջապես հետո ուղևորվել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ խուզարկությունից հետո բերման էր ենթարկվել տրանսգենդեր կին Դ.-ն: Կազմակերպության փաստաբանները տեսակցել են Դ.-ին և ստանձնել նրա պաշտպանությունը: Մի քանի ժամ անց Դ.-ին տեղափոխել են ՀՀ քննչական կոմիտե, որտեղ և իր պաշտպանների ներկայությամբ հարցաքննվելուց հետո, ժամը 16:25-ին ազատ է արձակվել՝ վերջինիս անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու հիմքով, ինպես նաև հերքվել է իր մասնակցությունը հարուցված քրեական վարույթով քննչական մարմնին հետաքրքրող դեպքերին:

Դեպքի հաջորդ օրը՝ հուլիսի 28-ին, գույքը վերադարձնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտե, դեպքի առնչությամբ ահազանգել և ֆեյսբուքյան իր էջում հրապարակում է տեղադրել «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր և նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ինչի արդյունքում հրապարակումներ են տեղադրվել նաև մի քանի լրատվական կայքերում, ինչպես նաև Կազմակերպության կողմից դիմում-նամակներ են ուղարկվել ՀՀ պետական մարմիններին՝ հորդորելով ուշադրության կենտրոնում պահել այս դեպքը և կոչ անելով Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց առնչվող քրեական գործերում վարել անաչառ քննություն, զերծ մնալ ցանկանած ձևի խտրականությունից և օր առաջ վերադարձնել տրանսգենդեր կնոջից առգրավված գումարը և բջջային հեռախոսները՝ վերականգնելով նրա սեփականությունը տնօրինելու իրավունքը:

Կազմակերպության փաստաբանի կողմից հուլիսի 31-ին միջնորդություն է ներկայացվել վարույթն իրականացնող մարմին՝ դրամական միջոցները և հեռախոսները վերադարձնելու մասին: 07.08.2023թ-ին քննիչի կողմից որոշում է կայացվել միջնորդությունը մերժելու մասին: Նշված որոշման դեմ ներկայացվել է բողոք ՀՀ գլխավոր դատախազություն: ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Գ. Սարգսյանի 31.08.2023թ. որոշմամբ բողոքը մերժվել է:

2023թ. սեպտեմբերին դատախազի որոշումը բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Մինչև դատարանի կողմից որոշում կայացնելը՝ 2023 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ քննչական Կոմիտեն, տրանսգենդեր կնոջ գործողություններում որևէ հակահիրավական վարքագիծ չգտնելով, վերջինիս վերադարձրել է ավելի քան երկու ամիս առաջ նրանից առգրավված դրամական միջոցները և գույքը:

ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՄԱՀԱԿՆԵՐՈՎ ԶԻՆՎԱԾ՝ ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՎ ԾԵԾԵԼ ԵՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋԸ

2023թ-ի մարտի 14-ին Կազմակերպություն է եկել տրանսգենդեր կին Է.-ն՝ կապտուկներով, վերքերով և հայտնել, որ մեկ օր առաջ, գիշերը հարձակման է ենթարկվել դիմակավորված անձանց կողմից, ծեծվել է, դեպքի վայրից կարողացել է դիմել փախուստի: Ոստիկանություն հայտարարություն է ներկայացրել դեպքի վերաբերյալ: Անհրաժեշտ է փաստաբան՝ իր իրավունքների հետագա պաշտպանության համար:

Ինչպես պարզ դարձավ՝ 2023 թվականի մարտի 13-ի լույս 14-ի գիշերը Ամիրյան-Զաքյան փողոցների խաչմերուկում տասից ավելի դիմակավորված անձինք մահակները ձեռքներին հարձակվել էին տրանսգենդեր կին Է.-ի վրա և դաժանաբար ծեծել: Տրանս կինը դիմել էր փախուստի, այնուհետև, նկատելով տարածքում ծառայություն իրականացնող պարեկներին, մոտեցել է նրանց օգնություն խնդրելու նպատակով, սակայն մինչև պարեկների մոտենալը դեպքի վայր, բռնարարները հասցրել էին դիմել փախուստի: Նույն օրը՝ դեպքից կես ժամ անց, վերոնշյալ երիտասարդները Երևանի քաղաքապետարանի տարածքում ծեծել են մեկ այլ տրանսգենդեր կնոջ՝ պատճառելով տարբեր աստիճանի վնասվածքներ, բացի այդ Մաշտոցի պողոտայում թիրախավորել են երկու այլ տրանսգենդեր կանանց, ովքեր հասցրել են դիմել փախուստի: Տրանսգենդեր կինը դեպքի առնչությամբ դիմել էր ոստիկանություն: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական բաժինը ներգրավված է գործի շրջանակներում և ապահովելու է ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում:

Է.-ն նշել էր, որ հասցրել է տեսնել երիտասարդներից մի քանիսի դեմքերը, ինչպես նաև տարածքում եղել են բազմաթիվ տեսախցիկներ, և դրանց տեսագրությունների ուսումնասիրության միջոցով հնարավոր է նույնականացնել բռնության ենթարկողներին, հատկապես որ նրանցից ոմանք դիմակավորված չեն եղել: ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է քրեական վարույթ խուլիգանության հոդվածով:

Գրեթե մեկ տարի է անցել սույն դեպքից, սակայն նախաքննության մարմնին այդպես էլ չի հաջողվում բացահայտել հանցագործություն իրականացնող անձանց ինքնությունը:

Փաստաբանների կողմից դեկտեմբեր ամսին բողոք է ներկայացնել դատախազությանը՝ նախաքննության թերի իրականացման վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է:

ԳՈՂԱՑԵԼ ԵՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ԴՐԱՄԱՊԱՆԱԿԸ

2023 թվականի հոկտեմբեր ամսին Կազմակերպության է դիմել ՌԴ քաղաքացի, տրանսգենդեր կին Գ.Կ.-ն և հայտնել, որ անհայտ անձը տրանսպորտային միջոցում գողացել է իր փաստաթղթերը և գումարը: Նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (գողություն) և 456-րդ հոդվածի 1-ին մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կամ տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը):

«2. Գողությունը, որը կատարվել է՝
...
2) տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ պահոցից կամ օբյեկտից,
...
պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:
ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 254, մաս 2, կետ 2

«1. Ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտը կամ իրավունք վերապահող, պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող կամ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող փաստաթուղթը, դրոշմը, կնիքը կամ տրանսպորտային միջոցի պետհամարանիշը հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 456, մաս 1

Մասնավորապես, Գ.Կ.-ն հայտնել է, որ 2023թ.-ի սեպտեմբերի 7-ին, ժամը 19:30-ից մինչև 21:00-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Ֆրանսիայի հրապարակից նստել է «203» համարի երթուղային տրանսպորտը և մեկնել Վաղարշապատ քաղաք: Մինչև Վաղարշապատ հասնելը Երևան քաղաքի Իսակովի պողոտայում՝ «Արգավանդի» խաչմերուկ չհասած կանգառում, երթուղայինից իջել է իրեն անծանոթ մի տղամարդ, ով մինչ այդ կանգնած է եղել իր աջ կողմում և անընդհատ հպվել է իր պայուսակին: Նրա իջնելուց հետո նկատել է, որ վերը նշված անհայտ անձն իր պայուսակից հափշտակել է դրամապանակը, որի մեջ եղել է 750 եվրո, 40 000 ՌԴ ռուբլի և 115 000 ՀՀ դրամ գումար, ինչպես նաև իր ՌԴ քաղաքացու անձնագիրը:

Կազմակերպության փաստաբանը ներգրավվել է որպես ներկայացուցիչ:

Նախաքննությունը շարունակվում է:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋԸ ԵՆԹԱՐԿԵԼ ԵՆ ՀՈԳԵԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Կազմակերպության է դիմել ՌԴ քաղաքացի, տրանսգենդեր կին Գ.Կ.-ն և հայտնել, որ 2023թ.-ի սեպտեմբերի 15-ին, գտնվել է Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի սկզբնամասում, երբ իրեն ավտոմեքենայով մոտեցել է մի անծանոթ երիտասարդ և առաջարկել է ունենալ սեռական հարաբերություն, սակայն մերժում ստանալով, հնչեցրել է սպառնալիքներ:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասով (հոգեկան ներգործություն), կատարվում է նախաքննություն: Անհրաժեշտ է փաստաբան՝ իր շահերը հետագայում պաշտպանելու համար:

«1. Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 194, մաս 1

2023թ-ի հոկտեմբեր ամսին կազմակերպության փաստաբանը ներգրավվել է որպես ներկայացուցիչ:

Նախաքննության ընթացքում տեղի է ունեցել առերես հարցաքննություն տրանսգենդեր կնոջ և ենթադրյալ հանցագործություն կատարած անձի միջև, որտեղ Գ.Կ.-ն պնդել է իր ցուցմունքները և մատնանշել է տվյալ անձին՝ որպես հանցագործություն կատարած անձի:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

ՊԱՐՏՔԸ ՉՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆԹԱՐԿՎԵԼ Է ԹՐԱՖԻՔԻՆԳԻ

2022թ-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ է դիմել սեքս աշխատող Ա.Ս.-ն և հայտնել, որ ենթարկվել է սեռական շահագործման, հարուցվել է քրեական գործ և ինքը ճանաչվել է տուժող, ունի իրավաբանական օգնության կարիք:

Ա.Ս.-ի խոսքով՝ ինքը 2020-2021թթ-ին Գ.Վ.-ի կողմից պարբերաբար ենթարկվել է սեռական շահագործման: 2021թ-ին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով՝ 4 դրվագով: 2022թ-ին գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, անհրաժեշտ է, որպեսզի Ա.Ս.-ի շահերը դատարանում ներկայացվի կազմակերպության փաստաբանների կողմից:

«1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով՝
պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 188, մաս 1

Սույն գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ Գ.Վ.-ն, Ա.Ս.-ին սեռական շահագործման մեջ դնելու դիտավորությամբ վերջինիս տվել է ոսկի՝ յուրաքանչյուր գրամի դիմաց 70 ԱՄՆ դոլար վերադարձնելու պայմանով: Հետագայում Գ.Վ.-ն կրկին ոսկյա զարդեր է տվել և ստիպել ուռճացված չափի գումարներ մարել ամեն օր: Արդյունքում Ա.Ս.-ն ընկել է ֆինանսական կախվածության մեջ Գ.Վ.-ից և ամենօրյա ռեժիմով հարկադրաբար զբաղվել է սեքս աշխատանքով «Տեցի կռուգ» կոչվող տեղանքում, իսկ ստացած գումարները՝ փոխանցել Գ.Վ.-ին: Բացի այդ, 2021թ-ին Գ.Վ.-ն Ա.Ս.-ի տանը վերջինիս նկատմամբ կիրառել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, ստիպել, որ շարունակի ամենօրյա ռեժիմով իրեն գումարների փոխանցումը և հեռացել՝ այդ կերպ նրան դնելով շահագործման վիճակի մեջ և շահագործել:

[4] Քրեական գործը հարուցվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ դատարան ուղարկելուց առաջ՝ հոդվածը վերավորակվել է ՀՀ նոր քրեական օրենսգրքով:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք են բերվել բավարար ապացույցներ, համաձայն որոնց Գ.Վ.-ի գործողությունների հետևանքով տուժող Ա.Ս.-ին պատճառվել է խոշոր չափերի՝ 6,144,530 ՀՀ դրամ գումար վնաս, որը հաստատվում է վարույթում առկա ապացույցներով, անդորրագրերով: Մասնավորապես, նշված փոխանցումները «Թելսել» և «Իզի Փեյ» ընկերությունների տերմինալների միջոցով մուտքագրվել են Գ.Վ.-ի կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարով նույնականացված դրամապանակին:

Վերը թվարկած հանցավոր արարքների համար Գ.Վ.-ի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական վարույթի ընթացքում Ա.Ա.-ն ճանաչվել է տուժող:

Գործի դատաքննության նախապատրաստական փուլի ընթացքում փաստաբանների կողմից տուժող Ա.Ս.-ի անունից ընդդեմ մեղադրյալ Գ.Վ.-ի ներկայացվել է գույքային հայց՝ 6,144,530 ՀՀ դրամի չափով՝ որպես հանցագործությամբ սեքս աշխատող Ա.Ս.-ին պատճառված վնասի հատուցում:

Ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում, հերթական դատական նիստ է նշանակվել 2024թ-ի հունվարին:

ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԱՆԱՅՔ ԵՆ

2022թ-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ է դիմել տրանսգենդեր կին Ա.Ա.-ն և հայտնել, որ որպես ամբաստանյալ՝ ունի իր իրավունքների դատական պաշտպանության անհրաժեշտությունը:

Ա.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ մի խումբ անձանց՝ Տ.Ք.-ի. Ա.Ս.-ի, Ս.Պ.-ի, ինչպես նաև քննությամբ չպարզված այլ անձանց հետ, անձի նկատմամբ բռնություն գործադրելով, ինչպես նաև ուրիշի գույքը վնասելով, 2017թ-ի սեպտեմբերի 12-ին, ժամը՝ 00:00-ի սահմաններում Երևան քաղաքի Բեյրութ, Գրիգոր Լուսավորիչ և Արգիշտի փողոցների խաչմերուկում, որպես զենք գործադրվող առարկաների գործադրմամբ՝ կատարել է խուլիգանություն:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով[5] (խուլիգանություն): Ա.Ա.-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել:

«1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև մեկ ամիս ժամկետով:

...

4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով»:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 258, մաս 1 և մաս 4

Կազմակերպության փաստաբանները ծանոթացել են գործի նյութերին և լսել տրանսգենդեր կնոջը: Ա.Ա.-ն պատմել է, որ 2017 թ-ի սեպտեմբերի 12-ի գիշերը գտնվել է Բեյրութի փողոցի մոտ Տ.Ք.-ի, Ս.Պ.-ի, Ա.Ս.-ի հետ: Ժամը 00:06-ի սահմաններում, Բեյրութի փողոցի մոտով անցել է սև գույնի ավտոմեքենա, որը կանգնել է իրենց մոտ, և մեքենայի հետնամասում նստած աղջիկը սկսել է բջջային հեռախոսով նկարել և ծաղրել իրենց: Խնդրել են իրենց չնկարահանել, սակայն մեքենայի վարորդը հայհոյել է իրենց և դուրս գալով մեքենայից՝ հարձակվել է Ս.Պ.-ի և Ա.Ս.-ի վրա, ձեռքերով հարվածներ է հասցրել վերջիններին, որի արդյունքում Ս.Պ.-ն ընկել է գետնին: Մեքենայի վարորդը քար է վերցրել, քարով հարվածել է Ա.Ս.-ի գլխին, հետո ձեռքով սկսել է խեղդել վերջինիս, հանել է Ա.Ս.-ի կեղծամը և վազելով մտել է այգի: Ժամանել են ոստիկանության աշխատակիցները, մեքենայի վարորդը մատնացույց է արել Ա.Ս.-ին և Ս.Պ.-ին, որոնց հետ վիճաբանել է: Ա.Ա.-ն և Տ.Ք.-ն կամավոր են գնացել ոստիկանություն՝ որպեսզի իրենց ընկերներին մենակ չթողնեն:

[5] ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդված 297:

Այնինչ հարուցվել է քրեական գործ և Ա.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, թե «2017թ-ի սեպտեմբերի 12-ի,՝ ժամը 00:00-ի սահմաններում, կանացի հագուստենր և կեղծամներ հագած, շպարված Տ.Ք.-ի, Ս.Պ.-ի, Ա.Ս.-ի և քննությամբ ինքնությունը դեռևս չպարզված այլ անձանց հետ, գտնվել է Երևան քաղաքի Կոմայգի կոչվող տարածքում, երբ նշված վայրով BMW մակնիշի ավտոմեքենայով երթևեկել է Ա.Զ.-ն կնոջ՝ Ռ.Հ.-ի և վերջինիս քրոջ՝ Մ.Հ.-ի հետ: Ա.Ա.-ն, Տ.Ք.-ն, Ս.Պ.-ն, Ա.Ս.-ն և քննությամբ ինքնությունը դեռևս չպարզված այլ անձինք, տեսնելով Մ.Հ.-ի ձեռքի բջջային հեռախոսը, կարծելով, որ նա լուսանկարահանում է, մոտեցել են ավտոմեքենային և այդ չնչին առիթն օգտագործելով, դիտավորությամբ խախտել են հասարակական կարգը, բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել ավտոմեքենայում գտնվող անձանց հասցեին, միաժամանակ ուրիշի գույքը վնասելով, ոտքերով և որպես զենք օգտագործվող քարերով և գարջրի շշերով հարվածել են ավտոմեքենային՝ վնասել մեքենայի տանիքի վահանակին կից ձախ կողային կանգնակը, մեքենայի չորս դռները և հետևի աջ անվաթևը, առջևի հողմապակին և առջևի աջ դռան ապակին՝ Ա.Զ.-ին պատճառելով ընդհանուր 405 000 ՀՀ դրամ գույքային վնաս, իսկ Ա.Ա-ն ավտոմեքենայի հետևի աջ հատվածում գտնվող բացված պատուհանից երկու ձեռքերով քաշել է մեքենայի հետնամասում նստած Մ.Հ.-ի մազերից՝ վերջինիս առողջությանը պատճառելով ուժեղ ֆիզիկական ցավ: Դրանից հետո Ա.Ա .-ն, Տ.Ք.-ն, Ս.Պ.-ն, Ա.Ս.-ն հայհոյանքներ են հնչեցրել մեքենայում գտնվող անձանց հասցեին, ձեռքերով և ոտքերով հարվածել մեքենային, քարեր և գարեջրի շշեր նետել մեքենայից դուրս եկած վարորդ Ա.Զ.-ի վրա, վազելով հետապնդել են Ա.Զ.-ին, Ա.Զ.-ին պատճառվել է թեթև մարմնական վնաս»:

Ներկայումս գործի քննությունը շարունակվում է դատարանում: Հարցաքննվել են տուժողները: Հերթական դատական նիստը նշանակվել է 2024թ-ի փետրվարին:

ԳՈՒՄԱՐ ԵՆ ՇՈՐԹԵԼ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋԻՑ

2023թ-ի հունվարին Կազմակերպություն է դիմել տրանսգենդեր կին Ա.Ա.-ն և հայտնել, որ 2021 թվականին շորթման զոհ է դարձել, գործը գտնվում է դատարանում, անհրաժեշտ է իր շահերը դատարանում ներկայացնելու համար փաստաբանի օգնություն:

Ա.Ա.-ն հայտնեց, որ Մ.Մ.-ն վերջինիս մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով իրենից պահանջել է զգալի չափերի՝ 30.000 ՀՀ դրամ գումար:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով (շորթում), քրեական վարույթի ընթացքում Ա.Ա.-ն ճանաչվել է տուժող:

«1. Շորթումը՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 182, մաս 1

Գործի նյութերից պարզվեց, որ մեղադրյալ Մ.Մ-ն 2019թ-ին սոցիալական կայքերից մեկում ծանոթացել է տրանսգենդեր կին Ա.Ա.-ի հետ: Ա.Գ.-ն հանդիսացել է Մ.Մ.-ի ծանոթը, ում հետ ծանոթացել է դեպքից 5 տարի առաջ: Նախապես տեղյակ լինելով իր և Ա.Ա-ի ընդհանուր ծանոթ Ա.Գ.-ի և Ա.Ա-ի մտերիմ հարաբերությունների մասին, տրանսգենդեր կին Ա.Ա.-ից պահանջել է մարել իրենից Ա.Գ.-ի նախկինում վերցրած պարտքը: Ստանալով բացասական պատասխան՝ Մ.Մ.-ն նպատակադրվել է Ա.Ա.-ի մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով, շորթմամբ հափշտակել զգալի չափերի գումար: Մ.Մ.-ն ներբեռնել է Ա.Ա.-ի սոցիալական հարթակի անձնական էջում տեղադրված կիսամերկ լուսանկարները, պատրաստել վերջինիս մասին արատավորող երեք էջեր, որոնք 2021թ-ի հունվարի 19-20-ն ընկած ժամանակահատվածում տեղադրել է սոցիալական կայքում՝ Ա.Ա.-ի պատիվն ու արժանապատվությունը արատավորող վերնագրերով: Հիշյալ արատավորող տեղեկություններ պարունակող կայքերը համացանցից ջնջելու դիմաց Մ.Մ.-ն Ա.Ա.-ից պահանջել է 30 000 ՀՀ դրամ գումար: Չկատարելով Մ.Մ.-ի պահանջը՝ Ա.Ա.-ն 2021թ-ի փետրվարի 02-ին դիմել է ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժին, որից հետո միայն Մ.Մ.-ն ջնջել է նշված էջերը:

Ներկայումս գործի քննությունը շարունակվում է դատարանում: Հարցաքննվել են վկաները, տուժողը և մեղադրյալը: Եզրափակիչ ելույթներով պետք է հանդես գան մեղադրյալը և պաշտպանը: Հերթական դատական նիստը նշանակվել է 2024թ-ի փետրվարին:

ԾԵԾԵԼ ԵՆ ՏՐԱՆԴԳԵՆԴԵՐ ԿՆՈՋԸ ԵՎ ԱՅՐԵԼ ԿԵՂԾԱՄԸ

Տրանսգենդեր անձ Գ.Թ.-ն դիմել է Կազմակերպությանը և հայտնել, որ անհայտ անձի, հետագայում՝ ամբաստանյալ Ա.Ծ.-ի կողմից ենթարկվել է ծեծի, նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, որից հետո կրակայրիչով այրել է նրա գլխին եղած շուրջ 95 սմ երկարության բնական մազերից պատրաստված կեղծամը՝ պատճառելով խոշոր չափերի՝ 1 970 000 ՀՀ դրամ արժողության գույքային վնաս:

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի (ծեծը) և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը): Գ.Թ.-ն ճանաչվել է տուժող:

«Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»:
ՀՀ քրեական նախկին օրենսգիրք, հոդված 118

«1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Նույն գործողությունը, որը՝
1) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,
2) խոշոր չափերի վնաս է պատճառել,
...
պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 185, մաս 1, մաս 2, կետեր 1, 2

Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներից պարզվել է, որ Գ.Թ.-ն 2019թ-ի հուլիսի 14-ին, ժամը 03:30-ի սահմաններում, իրեն անհայտ վարորդի և իր ծանոթ Կ.Ն.-ի հետ եղել է տաքսու մեջ, գնացել են Երևան քաղաքի Բագրատունյաց պողոտայի «Տեցի կռուգ» վայր, որտեղից Կ.Ն-ն պետք է գումար վերցներ: Ճանապարհին տաքսին կանգնել է, Կ.Ն.-ն իջել է մեքենայից՝ գումարը վերցնելու նպատակով: Այդ ընթացքում տաքսու ձախակողմյան հատվածում կայանել է արծաթագույն մեքենա, մեքենայից իջել են երեք տղամարդ: Իրեն է մոտեցել Ա.Ծ.-ն, հետո մյուս երկու տղաները, սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել իր հասցեին, Գ.Թ.-ին և տաքսու վարորդին պահանջել են իջնել տաքսուց՝ խնդիրներ չունենալու համար: Մի քանի րոպե վիճաբանելուց հետո՝ Գ.Թ.-ն իջել է մեքենայից և քայլել տաքսու ձախ կողմ: Գ.Թ.-ն եղել է կանացի հագուստով: Ա.Ծ.-ն ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել Գ.Թ.-ին, ծեծել՝ պատճառելով ֆիզիկական ցավ և կրակայրիչով այրել է նրա գլխին եղած շուրջ 95 սմ երկարության բնական մազերից պատրաստված կեղծամը՝ պատճառելով խոշոր չափերի՝ 1 970 000 ՀՀ դրամ արժողության գույքային վնաս:

Ապացույցների համակցությամբ հիմնավորվել է Ա.Ճ.-ի կողմից տրանսգենդեր կին Գ.Թ.-ին ծեծելու, նրա կեղծամն այրելու և գույքային վնաս պատճառելու հանգամանքները և քրեական գործն ուղարկվել է դատարան ըստ էության քննելու համար:

Դատական գործի ընթացքում փաստաբանի մասնակցությամբ իրականացված քննությունը ևս մեկ անգամ հաստատել է մեղադրանքը, սակայն, դատավորների փոփոխության արդյունքում գործը փոխանցվել է երրորդ դատավորին, ինչի հետևանքով դատաքննությունը երկարել է:

Ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում: Հերթական դատական նիստը նշանակվել է 2024թ-ի հունվարին:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԻՆԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կազմակերպություն է դիմել տրանսգենդեր կին Հ.Ռ.-ն և հայտնել, որ որպես մեղադրյալ՝ ունի իր իրավունքների դատական պաշտպանության անհրաժեշտությունը:

Հ.Ռ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ սեփականության իրավունքով իրեն չպատկանող ոսկյա զարդերը գրավից հանելուց հետո՝ իբր չի ցանկացել դրանք վերադարձնել սեփականատերերին:
Հարուցվել է քրեական գործ և Հ.Ռ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (խարդախություն):

«1. Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Խարդախությունը, որը կատարվել է՝
...
2) խոշոր չափերով,...
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 178, մաս 2, կետ 2

Հ.Ռ.-ն Կազմակերպության փաստաբանին հայտնել է, որ մի շարք անձինք, ովքեր զբաղվում են ոսկու առևտրով, իր հետ գտնվել են առևտրային հարաբերությունների մեջ: Որոշակի ժամանակ Հ.Ռ.-ն նշված անձանցից վերցրել է ոսկյա զարդեր, գրավադրել բանկում, այնուհետև դրանք հանել բանկից և վերադարձրել սեփականատերերին:

Սակայն, հերթական անգամ, 2019 թվականի օգոստոսի 20-ին, երբ նա գրավադրել է Ս.Գ.-ից վերցրած ոսկյա զարդերը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղում, գրավի դիմաց ստացված գումարը փոխանցել է իր հաշվին: Գործարքից հետո բանկի աշխատակիցը Հ.Ռ.-ին խնդրել է դրսում սպասել, քանի որ աշխատանքային ժամն ավարտվել է: Ս.Գ.-ն և ընկերները կասկածել են իրև Հ.Ռ.-ն, չի ցանկանում իրենց փոխանցի ստացված գումարը կամ ոսկյա զարդերը, զանգահարել են ոստիկանություն և հայտնել, թե իբր Հ.Ռ.-ն ցանկանում է ոսկյա զարդերը հափշտակել և հեռանալ: Բանկից ոստիկանություն է ահազանգել նաև Հ.Ռ.-ն և հայտնել, որ Ս.Գ.-ն և իր ընկերները վիճաբանում են իր հետ, ուզում են իրենից ավել գումար վերցնել:

Նախաքննության ընթացքում քննիչը դատարան միջնորդություն է ներկայացրել Հ.Ռ.-ին կալանավորելու վերաբերյալ, սակայն, Կազմակերպության փաստաբանի աշխատանքի արդյունքում դատարանը մերժել է կալանքի միջնորդությունը, և վերջինիս նկատմամբ կիրառվել է ազատությունից չզրկելու հետ կապված խափանման միջոց:

Փաստաբանի կողմից նախաքննության ընթացքում ներկայացվել է նաև միջնորդություն՝ Հ.Թ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, ինչը քննիչի կողմից մերժվել է և գործն ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:

Ներկայումս գործը քննվում է դատաքննության փուլում, հարցաքննվել են գործով տուժողները:

Հերթական դատական նիստը նշանակվել է 2024թ-ի հունվարին:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրանսգենդեր տղամարդ Կ.Ա.-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (սեռի փոփոխություն անձնագրում)

Տրանսգենդեր տղամարդ Կ.Ա.-ն 2018թ-ին ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժին դիմում է ներկայացրել ծննդյան ակտում ուղղումներ կատարելու վերաբերյալ: Դիմումով խնդրել է ուղղում կատարել ծննդյան ակտում, այն է՝ սեռի վերաբերյալ սյունակում «իգական» նշումը ուղղել «արական» նշումով:

ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից 17.12.2018թ. կազմված եզրակացությամբ դիմումը մերժվել է:

Կ.Ա.-ն 2019 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության, ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Կենտրոն և Նորք-Մարաշ տարածքային բաժնի՝ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու և վարչական ակտի ընդունումը մերժելու եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Դատարանը հայցը մերժել է, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վճիռը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ դատարանը՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

Կազմակերպության փաստաբանի կողմից Կ.Ա.-ի անունից 2022 թվականի օգոստոսի 12-ին ներկայացվել է բողոք Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:
ՀՀ սահմանադրություն, հոդված 26, կետ 1

«1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք»:

ՀՀ սահմանադրություն, հոդված 85, կետ

Սույն գործով ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժինը, մերժելով Կ.Ա.-ի դիմումը, հղում է կատարել ՀՀ արդարադատության նախարարի 14.05.2007թ. հրամանին, որը սահմանում է, որ ՔԿԱԳ մարմինը մերժում է քաղաքացիական կացության ակտի գրանցման մեջ փոփոխությունների, լրացումների և ուղղումների կատարումը, եթե ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, չեն բխում ՀՀ օրենսդրության պահանջներից կամ փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու պահանջը հիմնավորված չէ, փաստաթղթերում առկա են տեղեկությունների անհամապատասխանություններ:

Համապատասխան կարգավորումները, որոնք ըստ ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի բացակայել են դիմումում, դիմումը ներկայացնելու ժամանակ սահմանվել են նախկին «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով[6], որի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է մասնավորապես հետևյալ դեպքերում, երբ՝…*

[6] 2021թ-ին ընդունվել է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» նոր օրենքը, որն ուժի մեջ է մտել 16.05.2021թ-ին: Գործող օրենքով քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու կարգը սահմանվում է 66-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում, որտեղ սեռի փոփոխության մասին որևէ նշում չկա՝ ի տարբերություն նախկին իրավակարգավորումների:

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ»:

Այսինքն, նախկինում եթե անձը ցանկանում էր փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ (սեռի մասին գրառման փոփոխություն), նա պետք է՝

1. իրականացնի սեռափոխություն,

2. ներկայացնի ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Քննարկվող դեպքում, որպեսզի Կ.Ա.-ն կարողանար սեռի վերաբերյալ այունակում «իգական» նշումը ուղղեր «արական» նշումով, նա պետք է իրականացներ թվարկված գործողությունները, այն է՝ իրականացնել սեռափոխություն և ներկայացներ ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Ա.Փ.-ն, Գարսոնը և Նիկոտը ընդդեմ Ֆրանսիայի (դիմումներ 79885/12, 52471/13 և 52596/13, ECHR 121 (2017) 06.04.2017) գործով կայացրած վճռով[7] անդրադարձ է կատարել նշված հիմնախնդիրներին, մասնավորապես, նշելով, որ *տրանսգենդեր անձանց սեռական ինքնության ճանաչումը բժշկական միջամտությունների ենթարկվելուց հետո, որը նրանք չեն ցանկացել իրականացնել, նշանակում է անձնական կյանքի հարգելու իրավունքի լիակատար ապահովման մերժում: Դատարանը համարեց, որ անձի տեսքի փոփոխությունը, սեռափոխության վիրահատության, ստերջացման կամ այլ բժշկական միջամտությունների միջոցով, հանգեցնում է անդառնալի հետևանքների և խախտում է անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը: Դատարանը համարեց, որ պատասխանող պետությունը ձախողվել է իր պոզիտիվ պարտավորության իրականացման հարցում՝ ապահովելու անձնական կյանքը հարգելու իրավունքը: Դատարանը գտնում է, որ այս առնչությամբ 8-րդ հոդվածի խախտում է եղել:*

Բացի այդ, պարտադիր ստերջացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննադատել է Y.Y.-ն ընդդեմ. Թուրքիայի[8] (դիմում 14793/08) և Soares de Melo-ն ընդդեմ Պորտուգալիայի[9] (դիմում 72850/14) գործերով: Ուստի պետությունը չի կարող անձին հարկադրել կատարել սեռափոխության վիրահատություն, քանի որ այն ամբողջովին խաթարում է պետության պարտավորությունը՝ հարգելու յուրաքանչյուրի անձնական կյանքի և ազատության անձեռնմխելիությունը: Գենդերային ինքնությունը մարդու մասնավոր կյանքի մասն է կազմում և անձը չպետք է իր ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիության և գենդերային ինքնության միջև կատարի ընտրություն: Բացի այդ, գենդերային ինքնության ապացույց պահանջելը նվաստացուցիչ է, ոտնահարում է անձի արժանապատվությունը:

Նշենք նաև, որ Հայաստանում չկան իրավական կարգավորումները, որոնցով սահմանվում են սեռափոխության մասին բժշկական կազմակերպության կողմից տեղեկանք տրամադրելու նորմերը և մեխանիզմները:

Ներպետական բոլոր դատական ատյանները սպառելուց հետո՝ Կազմակերպության փաստաբանի կողմից Կ.Ա.-ի անունից 2022 թվականի օգոստոսի 12-ին ներկայացվել է բողոք ընդդեմ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

23.01.2023թ.-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացել է ծանուցում, ըստ որի Կ.Ա.-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության դիմումին տրվել է համապատասխան համար:

---

[7] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/spa#{%22itemid%22:[%22001-172913%22]}
[8] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22002-10569%22]}
[9] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-160938%22]}

Տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (ատելության խոսք, բռնության հրահրում և անձնական տվյալների հրապարակում)

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ, տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանը, 2019թ. ապրիլի 5-ին ելույթ ունեցավ ՀՀ ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումներում: ՀՀ ԱԺ-ում ելույթից հետո, բազմաթիվ անձինք թիրախավորեցին, ատելության խոսքեր և սպանության սպառնալիքները հնչեցրեցին Լիլիթ Մարտիրոսյանի հասցեին, նշելով, որ նա տրանսգենդեր անձ է և իրավունք չունի ելույթ ունենալ ՀՀ ազգային ժողովում:

Լիլիթ Մարտիրոսյանը 06.04.2019թ-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնի բաժին հաղորդում է ներկայացրել, որ ՀՀ Ազգային ժողովում ելույթից հետո «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը համացանցում իր ֆեյսբուքյան էջով, անօրինական հրապարակել է իր անձնական տվյալ համարվող բնակության հասցեն: Մասնավորապես, «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը, ով Լիլիթ Մարտիրոսյանի պատվերով սնունդ էր առաքել վերջինիս, տեսնելով, որ պատվիրատուն Լիլիթ Մարտիրոսյանն է, հրապարակել էր վերջինիս հասցեն ֆեյսբուքյան իր անձնական էջում, ինչպես նաև բոլոր ցանկացողներին պատրաստակամություն էր հայտնել տրամադրել Լ. Մարտիրոսյանի հեռախոսի համարը:

Նույն օրը, Լ.Մարտիրոսյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնի բաժին հաղորդում է ներկայացրել, որ «Արծիվ 30 Արարատ մահապարտ խումբ» անվանումով անձնակազմի անդամի կողմից ստացել է սպանության և բռնության սպառնալիքներ, որը հրապարկվել է տեսանյութի միջոցով: Մասնավորապես, սպառնալիքներ հնչեցնող անձը YouTube կայքում տեղադրված բոլորին հասանելի իր տեսանյութի[10] 2.52 վայրկյանին սպառնում է «սատկացնել» նրան և իշխանություններին հորդորում է իրեն մարդասպան չսարքել:

ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնի հետաքննիչ Ա.Ոսկանյանի կողմից 16.04.2019թ.-ին կայացվել է որոշում՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Նշված որոշումը բողոքարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա. Աֆանդյանի 13.05.2019թ-ի որոշմամբ բողոքը մերժվել է: Դատախազության որոշման դեմ 03.06.2019թ-ին ներկայացվել է բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.09.2019թ-ի որոշմամբ բողոքը մերժվել է: Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 08.11.2019թ-ի որոշմամբ կրկին մերժվել է: 16.12.2019թ-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանը 17.01.2020թ.-ին վերադարձրել է Լ.Մարտիրոսյանի այն հիմնավորմամբ, որ վճռաբեկ բողոքի պատճենը Լ.Մարտիրոսյանը չի ուղարկել շահագրգիռ անձանց՝ «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչ Կարապետ Կարապետյանին և «Արծիվ 30 Արարատ մահապարտ խումբ» անվանումով անձնակազմի անդամ Եփրեմ Մարգարյանին:

23.01.2020թ.-ին Լիլիթ Մարտիրոսյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոքը, միևնույն ժամանակ, նշելով, որ Եփրեմ Մարգարյանը և Կարապետ Կարապետյանը համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի, չեն հանդիսանում դատավարության մասնակիցներ և Լիլիթ Մարտիրոսյանը վճռաբեկ բողոքի պատճենը նրանց ուղարկելու պարտավորություն չունի, իսկ դատավարության մյուս մասնակիցներին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն վճռաբեկ բողոքի պատճենն ուղարկվել է: ՀՀ վճռաբեկ դատարանը 28.02.2020թ-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ նշելով, որ Լիլիթ Մարտիրոսյանը չի շտկել վճռաբեկ բողոքում առկա թերությունները:

[10] Տեսանյութի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=0JFm45dPuLw

Չքննելով և Լ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքի վերաբերյալ որոշում չկայացնելով, ՀՀ վճռաբեկ դատարանը խախտել է Լ.Մարտիրոսյանի մի շարք իրավունքներ, ուստի ներկայացվել է բողոք Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

«1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:
2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:
...»:

ՀՀ սահմանադրություն, հոդված 34, կետ 1 և 2

Մարդու իրավունքների եվրոապական դատարան ներկայացված բողոքում փաստարկվել է, որ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 6-րդ, 8-րդ և 13-րդ հոդվածները:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը դրսևորվում է Լ.Մարտիրոսյանի նկատմամբ հնչեցված սպանության և բռնության սպառնալիքների և այդ առնչությամբ իրավասու մարմինների կողմից որևէ քննություն չիրականացնելու մեջ: Մասնավորապես, թե՛ հետաքննության մարմիններում, և թե՛ դատարաններին ուղղված բողոքներում Լ.Մարտիրոսյանը նշել է, որ իրեն ուղղված սպանության սպառնալիքները անհրաժեշտ է դիտարկել նաև խոշտանգման համատեքստում, սակայն, այդ առումով որևէ քննություն չի իրականացվել: Ավելին, թե՛ առաջին ատյանի դատարանը, և թե՛ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը իրենց որոշումներում որևէ կերպ չեն անդրադարձել այդ հանգամանքին: Մասնավորապես, նշվել է մեր կողմից, որ «որևէ անձի խոշտանգմամբ սպառնալը կարող է համարվել որպես առնվազն անմարդկային վերաբերմունք» (տե՛ս Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ Միացյալ Թագավորության, դիմումներ 7511/76; 7743/76, § 26)[11] և *«մասնավորապես, ֆիզիկական խոշտանգումից վախն ինքնին կարող է համարվել որպես հոգեկան խոշտանգում: Այն որակումը, թե արդյոք տվյալ ֆիզիկական խոշտանգման սպառնալիքը համարվում է հոգեկան խոշտանգում, կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, կախված է տվյալ գործի հանգամանքներից, այդ թվում, մասնավորապես՝ գործադրված ճնշման ծանրությունից և պատճառած հոգեկան տառապանքի ուժգնությունից»* (Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի, դիմում 22978/05, ՄԻԵԴ 2010)[12]: Նման պարագայում, խախտվել է նաև Լ.Մարտիրոսյանի՝ խոշտանգումներից զերծ լինելու իրավունքը, ինչը նաև դրևսրվել է պետական մարմինների և դատական մարմինների այդ հարցը քննելու բացարձակ հրաժարումով, որևէ կերպ, որևէ իրավասու մարմին չի անդրադարձել այդ հարցին և որևէ իրավական գնահատական չի տվել:

[11] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-57455%22]}
[12] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/tur#{%22itemid%22:[%22001-99015%22]}

Հոդված 8-ի խախտումը դրսևորվում է նրանով, որ Լ.Մարտիրոսյանը արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներից զրկված լինելով, չի կարողացել պաշտպանել իր անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը: Ներպետական իրավասու մարմինները, հաշվի չեն առել, որ Լ.Մարտիրոսյանի բնակության վայրի հանրայնացումը «ԱԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչի կողմից խախտել է Լիլիթ Մարտիրոսյանի անձնական կյանքի իրավունքը: Հետաքննության մարմինները և առաջին ատյանի ու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները նշել են, որ Լ. Մարտիրոսյանի հաշվառման հասցեն հանրամատչելի տեղեկություն է, և դրա հրապարակումը չի խախտել Լ.Մարտիրոսյանի իրավունքները, այնինչ, Լ.Մարտիրոսյանը բողոքել էր, որ հրապարակվել է նրա փաստացի բնակության հասցեն, որը հանրամատչելի չի եղել, որևէ երրորդ անձի այդ մասին հայտնի չի եղել, և դրա հրապարակման թույլտվություն Լ.Մարտիրոսյանը չի տվել, սակայն այդ հանգամանքին ուշադրություն չի դարձվել:

Ավելին, եթե նույնիսկ իսկապես Լիլիթ Մարտիրոսյանի փաստացի բնակության հասցեն հանրամատչելի լիներ հանրության համար, նույնիսկ այդ դեպքում, հաշվի առնելով գործի հանգամանքները, Լ.Մարտիրոսյանի նկատմամբ տվյալ ժամանակահատվածում հասարակության որոշ անդամների կողմից ատելության, սպանության սպառնալիքների առկայությունը, Լ. Մարտիրոսյանը կարող էր ակնկալել իր անձնական կյանքի և տվյալների պաշտպանություն, որի մասին նշել է նաև եվրոպական դատարանը. *«Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում այն հանգամանքը, որ խնդրո առարկա տեղեկություններն արդեն գտնվում են հանրային տիրույթում, դրանք անհրաժեշտաբար չի զրկում 8-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից»* (Սատակունան Մարկինապորսի Օյը և Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի, դիմում 931/13, § 134)[13]: Հետևաբար, այն պարագայում, երբ Լ.Մարտիրոսյանի փաստացի բնակության հասցեն որևէ կերպ հանրայնացված չի եղել, որևէ անձ իրավունք չուներ առանց վերջինիս համաձայնության հրապարակեր այն: Հետևաբար, համադրելով Կոնվենցիայի 6 և 13 հոդվածների հետ, խախտվել է նաև կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

Առանց քննության թողնելով Լ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը խախտել է Լ.Մարտիրոսյանի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունքը, որն ամրագրված է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում: Մասնավորապես, որպես պատճառ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել էր, որ վճռաբեկ բողոքի պատճենը Լ.Մարտիրոսյանը չէր ուղարկել շահագրգիռ անձանց, այնինչ, ինչպես փաստվեց, նրանք չեն հանդիսացել դատավարության մասնակիցներ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի համաձայն՝ դատավարության մասնակիցներն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը: Հետևաբար, վճռաբեկ բողոքի պատճենը որևէ այլ անձի ուղարկելու պարտավորություն Լ.Մարտիրոսյանը չուներ: ՀՀ վճռաբեկ դատարանը, ոչ իրավաչափ պարտավորություն դնելով Լ.Մարտիրոսյանի առջև, խախտել է նրա արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի և արդար դատաքննության իրավունքը՝ հրաժարվելով ըստ էության քննել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները:

[13] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/app/conversion/docx/pdf?library=ECHR&id=001-175121&filename=CASE%20OF%20SATAKUNNAN%20MARKKINAP%C3%96RSSI%20OY%20AND%20SATAMEDIA%20OY%20v.%20FINLAND.pdf&logEvent=False

Եվրոպական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է դատական մատչելիության խնդրին, մասնավորապես նշելով. «Պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, *«...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Խալֆաուն ընդդեմ Ֆրանսիայի, դիմում 34791/97, 14/03/2000)14, կամ «Սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը» (Մարինին ընդդեմ Ալբանիայի, դիմում 3738/02, § 113)15:*

Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված նորմը ոչ միայն չէր համապատասխանում օրենքին՝ ՀՀ քրեական դատավարությանը, այլև նման կիրառումը անհամաչափորեն սահմանափակել է Լ.Մարտիրոսյանի դատական մատչելիության և արդար դատաքննության իրավունքը: Վերջինիս վրա դրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից չբխող պահանջ, որի կատարումը չէր բխում նրա պարտականություններից:

Եվրոպական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է դատական մատչելիության խնդրին, մասնավորապես նշելով. *«Պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*Խալֆաուն ընդդեմ Ֆրանսիայի, դիմում 34791/97, 14/03/2000)*, կամ «Սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը»* (Մարինին ընդդեմ Ալբանիայի, դիմում 3738/02, § 113) :

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հետ միաժամանակ, խախտվել է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Լիլիթ Մարտիրոսյանի վրա դրված ոչ իրավաչափ պարտավորությունը զրկել է վերջինիս արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից: Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնի նպատակն է հնարավորություն տալ ներպետական մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին, կանխելու կամ վերականգնելու Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները: Սա հիմնված է 13-րդ հոդվածում արտացոլված այն ենթադրության վրա, համաձայն որի Կոնվենցիայի իրավունքների խախտումների համար ներպետական իրավական համակարգը պետք է նախատեսի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ (Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի, դիմում 25803/94, § 74[16]; Կուդլան ընդդեմ Լեհաստանի, դիմում 25803/94, § 152[17]):

Ուստի, եվրոպական դատարան ներկայացված բողոքով Լիլիթ Մարտիրոսյանն ակնկալում է իր իրավունքների խախտման ճանաչումը եվրոպական դատարանի կողմից:

07.03.2023թ-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացել է ծանուցում, ըստ որի Լիլիթ Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության դիմումին տրվել է համապատասխան համար:

---

[14] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-58374%22]}
[15] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-84061%22]}
[16] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:[%22001-58287%22]%7D
[17] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-58920%22]}

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով 2023թ-ի ընթացքում Կազմակերպության իրավաբանական բաժնի կողմից վարվող գործերը, պետք է փաստենք, որ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ կատարված իրավախախտումները նախորդ տարիների համեմատ չեն նվազել և չեն փոխել իրենց բնույթը, թեև պետության քաղաքականությունը որոշակի փոփոխություններ է կրել, այդուհանդերձ խնդիրները մնացել են նույնը, իսկ հասարակության վերաբերմունքը դեռևս անհանդուրժող է և տրանսֆոբ:

Հայաստանում անհրաժեշտ է կատարել որոշակի օրենսդրական բարեփոխումներ՝ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ կատարվող բռնությունները կանխարգելելու, ինչպես նաև հասարակական և իրավական մի շարք ոլորտներում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց մի շարք կենսական ծառայությունները հասանելի դարձնելու համար:

Մինչ օրս խնդիր է մնում ոստիկանության և քննչական մարմինների անհանդուրժող և վատ վերաբերմունքը Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ, մասնավորապես ոստիկանության բաժանմունքներում ոչ պատշաճ վերաբերմունք են ցուցաբերում համայնքի ներկայացուցիչների նկատմամբ, ծաղրում են և թույլ չեն տալիս իրացնելու իրենց իրավունքները:

Հաշվի առնելով Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց վստահության ցածր մակարդակը ոստիկանության նկատմամբ՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել ոստիկանության ծառայողների շրջանում կրթական ծրագրեր, որոնք կբարձրացնեն ոստիկանության ծառայողների իրավական պատրաստվածությունը: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք հաճախ նաև վատ վերաբերմունքի են արժանանում հենց ոստիկանության բաժիններում, անհրաժեշտ է համապատասխան դասընթացների միջոցով ոստիկանության աշխատողների մոտ ձևավորել զգայուն վերաբերմունք Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ:

Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձինք ենթարկվում են խտրականության նաև պետական այլ մարմինների հետ հարաբերություններում և անհավասար պայմաններ են ստանում այլ անձանց համեմատ: Դա կարող է վերաբերել ծառայությունների, իրավունք վերապահող փաստաթղթերի ստացմանը և այլ դեպքերին, երբ ծառայություն տրամադրողը անհարկի ձգձգում է Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքների իրականացումը, ինչն ապահովված է օրենքով:

Կազմակերպության նախորդ զեկույցներում բազմիցս անդրադարձ է կատարել Հայաստանում սեռափոխության խնդիրներին: Փաստենք, որ մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում որևէ կերպ կարգավորված չէ անձի սեռափոխությունը, ինչը հանգեցնում է բժշկական և դրանից բխող նաև իրավական խնդիրների: Սեռափոխության և հորմոնաթերապիայի խնդիրներին բախվում են տրանսգենդեր անձինք, որոնք ենթարկվում են խտրական վերաբերմունքի թե՛ բժշկական պրակտիկայի, թե՛ իրավական կարգավորումների բացակայության պատճառով:

Անձինք, որոնք այնուամենայնիվ ենթարկվում են սեռափոխության, կարիք ունեն բժշկական հսկողության և բուժման, որի բաղկացուցիչ մասն է կազմում հորմոնաթերապիան, այնինչ Հայաստանի Հանրապետությունում սեռափոխության վիրահատությունների և հորմոնաթերապիայի վերաբերյալ կլինիկական ուղեցույց առկա չէ, ուստի, վիրահատական միջամտության և հորմոնալ բուժման ցուցումները և կարգավորումները բացակայում են: Հայաստանում այժմ առկա հորմոնալ դեղամիջոցների ցանկը սահմանափակ է և եվրոպական երկրներում օգտագործվող ժամանակակից դեղամիջոցները Հայաստանում գրանցված չեն և չեն վաճառվում:

Ուստի, ՀՀ առողջապահության նախարարությունը պետք է մշակի տրանսսեքսուալ անձանց սեռափոխության վիրահատության և հորմոնաթերապիայի կլինիկական ուղեցույցներ, ինչպես նաև մշակի օրենսդրական կարգավորումներ՝ հեշտացնելու համար ՀՀ հորմոնալ դեղամիջոցների ներկրումը և սպառումը տրանսսեքսուալ անձանց համար:

Անհրաժեշտ է վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան, ինչը գենդերային հիմքով բռնությանը վերջ դնելու համապարփակ իրավական, նորմատիվ հիմք է: Վենետիկի հանձնաժողովն այն կարծիքին է, որ այդ Կոնվենցիայում չկան այնպիսի դրույթներ, որոնց վերաբերյալ կարելի է ասել, թե դրանք «հակասում են» ՀՀ սահմանադրությանը: Ընդհակառակը, Ստամբուլյան կոնվենցիայի հիմնական պարտավորությունը, այսինքն՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի և ընտանեկան բռնության կանխարգելումը և դրա դեմ պայքարը, արդեն իսկ բխում է Սահմանադրությունից և մարդու իրավունքների մասին այլ պայմանագրերից, որոնց մասնակից կողմ է Հայաստանը: Հետևաբար պետք է ավարտին հասցնել այն վավերացնելու գործընթացը:

Հաշվի առնելով հասարակության մեջ ծայրահեղական ատելության խոսքի դրսևորումները Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ, բռնությունն արդարացնող և ատելություն սերմանող կոչերը, Կազմակերպության կողմից մեկ տարվա ընթացքում հավաքագրված դեպքերը՝ գտնում ենք, որ խիստ անհրաժեշտ է նաև քրեականացնել ատելության խոսքը, որը դրսևորվում է մասնավորապես անձանց գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության հիմքով: Ատելության խոսքը հասնում է ահռելի չափերի և էական վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար, իսկ վտանգի կանխումը պետության պարտականությունն է: Ատելության խոսքը գեներացնում է նաև բռնություն, ուստի, պետությունը պարտավոր է համապատասխան մեխանիզմների օգնությամբ կանխել և պատժել բռնությունը, որը հիմնված է ատելության խոսքի վրա:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես անկախ գործող սահմանադրական մարմին, պետք է հետևողականորեն քայլեր ձեռնարկի՝ ապահովելու Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց շահերի պաշտպանությունը: Անհրաժեշտ է, որպեսզի տարեկան կամ արտահերթ զեկույցների միջոցով ՀՀ ՄԻՊ-ը վերհանի գործող օրենսդրական բացերը, Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց նկատմամբ բռնության դեպքերը իրավասու մարմինների մոտ դարձնի քննության առարկա:

Եզրափակելով վերոգրյալը՝ նշենք, որ Կազմակերպությունն իր հետագա աշխատանքներում ևս շարունակելու է համագործակցել պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, ՁԼՄ-ների հետ՝ առաջ մղելու Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց իրավունքների պաշտպանության խնդիրները, հասնելու նրանց տրամադրվող ծառայությունների մատչելիությանը, մշակելու և իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ՝ ի նպաստ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ+ անձանց:

+374 11 880 770
rightsidengo@gmail.com
www.rightsidengo.com

Social media

RightSide/NGO

RightSide/NGO

RightSide/NGO

RIGHT SIDE HUMAN RIGHTS DEFENDER NGO
Armenia, Yerevan